



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ


ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Բացում 1876 Ամին

ՆԻՍՏ ԺԷ

28 ՅՈՒՆ ԿԱՐ 1877



ՂԱԼԱԹԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ

1877

ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

Ստեփան Արսւանեան	փաշա	Ա.	Ատենապետ
Տիգրան Եռսուֆեան	էֆէնտի	Գ.	.
Կարեղին Յ. Մելիքեան	.	Ա.	Ատենադպիր
Համբարձում Ս. Ալաճաճեան	.	Բ.	.
Առաքել Ալթուն Տիրրի	.	Գ.	.

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Բ. Մկրեան		Ատենապետ
Տ. Գրիգոր Բ. Աճէմեան		
Սարգիս Աղաբէկեան	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Յովհաննէս Նուրեան	էֆէնտի	Ատենապետ
Գէորգ Ստիմարաճեան	.	
Պօղոս Պառնասեան	.	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԳԻՒԱՆ

Յակոբ Քաղաղեան	էֆէնտի	Ատենապետ
Յովհաննէս Ազնաւորեան	.	
Ստեփան Պէյլիկճեան	.	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Տիգրան Եռսուֆեան	էֆէնտի	Ատենապետ
Սոսէն Խօճասարեան	.	
Նաղարէթ Շահապաղեան	.	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Յարութիւն Մէրէճ—Գուլի	էֆէնտի	Ատենապետ
Համբարձում Մազպուլեան	.	
Եղիազար Մէլիքեան	.	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Տ. Ներսէս փարդապետ Արսւանեան		Ատենապետ
Կարապետ Շահապաղեան	էֆէնտի	
Նշան Քաղաղեան	.	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Միքայէլ Մամիկոնեան	էֆէնտի	
Առաքել Ալթունեան	.	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ

Կարապետ Իւթիւճեան	էֆէնտի	Ատենապետ
Ստեփան Փափաղեան	.	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բացում 1876 Ամին

ՆՈՍ ԺԷ

28 ՅՈՒՆ ՎԱՐ 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Ա.Է.Է.)  
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱՀԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	22 Գէորգ Ստիմարաճեան Բ. Պ	Իւսկիւտար Ս. Կարապետ
ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ	23 Խաչիկ Մանկասարեան Բ. Պ	49 Միւհրան Պահճէքափուլեան Բ.
1 Խորէն Արքայ. Նար Պէյ Բ.	24 Կարապետ Աղարտմաճեան Բ.	50 Յովհաննէս Ճիւաճեան
2 Կարապետ Ե. Սերոբեան Բ. Պ	25 Համբարձում Մազպուլեան Բ.	51 Նիկողոս Ալաճաճեան Բ.
3 Մասթէոս Ե. Իզմիրլեան	26 Մինաս Գափամաճեան	52 Տրդատ Փափաղեան
4 Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց	27 Յովհաննէս Պոյաճեան Բ.	(Գ. ՎԻՃԱԿ)
5 Գարեղին Ե. Թաթարեան	28 Ն. Մէզպուլեան Տօթօր Բ.	Բէրա և Գասըմ փաշա
6 Խորէն Ե. Կիրայեանց Բ.	29 Պօղոս Պառնասեան Բ.	53 Աբիկ Ունճեան Բ. 2
7 Հմայեակ Ե. Գիմարսեան Բ.	30 Յովհաննէս Սուրբէնեան Բ. 7	54 Գրիգոր Սէլիմիէճեան Բ. 2
8 Յովհաննէս Ե. Փափաղեան Բ. Պ	31 Սարգիս Աղաբէկեան Բ.	55 Մարտիրոս Յ. Տիլեան Բ. 2
9 Ներսէս Ե. Արանեան Բ.	32 Սահակ Ապրօ Բ. Պ	56 Միքայէլ Մամիկոնեան Բ. Պ
10 Պօղոս Ե. Խօլտամեան Բ. Պ	33 Սենէքերիմ Մանուկեան Բ. Պ	57 Նշան Քաղաղեան Բ.
11 Եղնիկ Ե. Ասազունի Բ.	34 Փէշտըմալճեան Տօթօր Բ.	58 Ստեփան Խնդիրեան Բ. Պ
12 Արիտակէս Քաչ. Մամբր. Բ. 2	35	59 Տիլեմաք Մ. Էքսէրճեան
13 Գէորգ Ե. Արծրունի Բ. Պ	36	60 Իլիաս Չայեան
14 Գրիգոր Ե. Աճէմեան	(Բ. ՎԻՃԱԿ)	61 Յարութիւն Նորատունկ Բ.
15 Խորէն Ե. Փէշիվան. Բ. Պ	Պէշիվաշ	62 Գրիգոր Մարկոսեան Բ. 2
16 Յարութիւն Ե. Սերոբ. Բ.		Միջագիւղ
17 Յովհաննէս Ե. Մկրեան Բ.	38 Բարսեղ Հալաճեան Բ.	63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
18 Սուքիաս Ե. Ստեփան. Բ. 2	39 Կարապետ Ս. Իւթիւճեան	64 Յակոբ Կոստանդեան Բ. Պ
19 Սահակ Տ. Սարգսեան Բ.	40 Յարութիւն Մարգարեան Բ.	65 Յակոբ Պ. Նորատունկ Բ.
20		66 Յովհաննէս Աղայէկեան Բ. Պ
ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ	ԵՆՆԻԳԱՓՈՒ	67 Տիգրան Եռսուֆեան Բ.
(Ա. ՎԻՃԱԿ)	41 Խաչատուր Ղազարոսեան Բ. 2	Պէյքօղ և Ղարաթիւս
Գուճապիւռ, Կէտիկ փաշա և	42 Կարապետ Գ. Փափաղեան Բ. Պ	68 Յ. Մէրէճ—Գուլի
Գուճապիւռի դուրս	43 Մարուգէ Յրէնկեան Բ.	(Գ. ՎԻՃԱԿ)
21 Գրիգոր Պէրպէրեան Բ.	44	Ղուզղունճուք և Իճատիէ
Բ. Բացակայութիւն առաջին	Իւսկիւտար Ս. Խաչ	69 Յովհաննէս Խօսեան Բ.
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	45 Յովհաննէս Շահեան	70 Ստեփան Պէյլիկճեան
Բ. Պ Բաց. բանաւոր պատճառ:	46 Յովսէփ Ս Մազլումեան Բ. Պ	
	47 Սերոբէ Պասմաճեան Բ.	
	48 Ստեփան Արանեան	

Գատըգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
71 Կարապետ Շահապետան Բ.	Կարին
72 Մկրտիչ Մուրատեան Բ. Պ	101 Մանուկ-Արլանեան Բ. Պ
Նարլըզ ափու	Քէօթեան
73 Յակոբ Եէմէնիճեան Բ. Պ	102 Մ. Փափազեան Տօթթօր
Եէնիմահալլէ Սամաթիոյ	Աղբիւրեանուպօլիս
74 Օգոսէն Խօճասարեան	103 Բուբէն Կիւմլուչկերտ Բ. Պ
Թօփազափու	Նիկոմիդիա
75	104
Էյուսպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	Ակն
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Պետրոս Միսաքեան Բ.
Գուրուչէլմէ	Գարահայար
77 Ասափա Իկիտպաշեան	106
Հիսար և Պոյաճի գիւղ	Արարկեր
78 Յովհաննէս Նուրեան	107 Կարապետ Խաչիկեան
Նոր գիւղ և Սթէնիա	Բաղէշ
79 Ղաղար Հովուեան Բ. Պ	108
Պալատ	Պրուսա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ.	109 Բ. Ղաղարսեան
81 Յովհաննէս Կրճիկեան	Եւգոսիա
82	110 Մելքոն Հալաճեան Բ.
Գարակէօմբիւկ	Ամասիա
83 Յարութիւն Զէնճիրճեան Բ. Պ	111 Համբարձում Ալաճաճեան
84 Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ	Բալու
(Ե. Վ. ԻՃԱԿ)	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ.
Սամաթիա	Եդեսիա
85 Ալիքսան Ալշիրեան Բ. Պ	113 Յակոբ Իւթիւճեան
86 Աւետիս Քօյոլեան	Մանճրլիս
87 Եղիազար Մելիքեան Բ. 2	114
88 Մինաս Ճաֆճաֆեան Բ.	Հաճըն
89 Յակոբ Քաղազեան Բ.	115
90 Յակոբ Ամասեան Բ. 2	Երզնկա և Բաբերդ
91 Նազարէթ Շահապետեան Բ. Պ	116
92	Թէքիրտաղ
93	117 Տիգրան Գ. Սինանեան Բ.
94	Կեսարիա
Խասգիւղ	118
95 Աւաքել Ալթուն Տիւրրի Բ.	Խարբերդ
96 Խաչատուր Պ. Միսաքեան	119 Յովհան Եաղճեան Բ.
97 Բէթէնու Պէլիկճեան Բ. 2	Պալքէսէր
98 Սարգիս Արապեան Բ.	120 Յովհաննէս Յովակիմեան Բ. 2
99 Սարգիս Աբրահամեան	
100 Սիմոն Մէքայէլեան Բ. 2	

Մուշ
121 Ստեփան Պ. Պ. Փափազեանց
Տիվրիկ
122
Զէյթուն և Մարաշ
123
Տրապիզոն
124
Պաղատա
125
Տիգրանակերտ
126
Վան
127 Սիմոն Մաքսուտեան Բ. Պ
Աղթամար
128
Հալէպ և Այնթապ
129
Սերաստիա
130 Մկրտիչ Մէլիքեան
Բուսճուխ
131
Կարս
132 Աբրահամ Յ. Այվազեան Բ.
Զմիկածագ
133 Համբարձում Սարլքէլչեան
Գաղատիա
134
Ատանա
135
Արղերդ
136 Մատթէոս Ալիքսանեան Բ. 2
Եօզատ
137 Լօղօթէթ Պալեօզեան
Մալաթիա
138
Իզմիր
139
Եգիպտոս
140

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Վերսին-Մանուկ-Արլանեան. շարունակեան քննարկեան յօդուածայ թաղանձար-Մանուկ-Արլանեան, յերկրորդ ընթացիւն:

#### ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատեանը բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 25 երեսօխոսանաց, որոց վերջին թիւը հասաւ 31 ի:

Արրազան Պատրիարքը թէև ի սկզբան ներկայ էր, սակայն տկարութեան պատճառաւ մեկնելով՝ Տէր Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան նախագահեց ժողովին:

4.

#### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽՈՐԴ Ժ. ԵՒ ԺԵ. ՆԻՍՏԵՐՈՒ ԱՏԵՆԱԳՈՐԻԹԵԱՆՅ

Ատենապետ փաշան յայտնելով որ նախընթաց երեք նստերէն միայն ժ. և ժե. նստերու ատենագրութիւնք առայժմ հրատարակուած և ցրուած են, նախ՝ ժ. նստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսօխոսաններն:

Մէրեթ-Գոնի Բ. ԷՅ. — ժ. նստին՝ 285 երեսին՝ Բ. սիւնակին մէջ իմ անուամբ երեցած հատուածն իմ բառերովս

կ'սկսի, բայց բնաւ իմ բերնէս չեղած խօսքերով կ'չարունակէ: Ես նոյն օրն ըսի թէ՛ « Ես խնդրողներէն եմ որ այս անգամու նիստն ուշանայ և պատճառն ալ պատրաստ եմ յառաջ դնելու եթէ ժողովն ուզէ »: Բայց ոչ երբէք քաղաքական պարագայից ստիպումը պատճառ ցոյց տուի և ոչ ալ առաջարկութիւն ըրի, ինչպէս կերևի ատենագրութեան մէջ:

Կը զարմանամ թէ՛ ուրիշ կը գտնեն այդ խօսքերն ու ինձ կը վերագրեն:

Կրճիկեան Բ. ԷՅ. — ժ. նստի ատենագրութեան մէջ իմ խօսքերուս առթիւ քանի մը սխալներն ուղղել կուզեմ անոր համար մանաւանդ՝ որ կարևորութիւն ունեցող պարագայի մը կը վերաբերին:

288 երեսի Բ. էջի վերջին խօսքս պէտք է ըլլայ սուպէս.

« Ատենապետ փաշա՛, քանի որ խնդիրը քուէի դրուած չէ՛ խօսիլ կուզեմ: Կառարկէք թէ կանոնէն չեղելով անոր տրամադրած թիւէն աւելի անձանց խօսք տուած էք. թող անոնցմէ մէկն ալ ես ըլ-

լամ. խնդրոյն ստիպողականութեան վրայ պիտի խօսիմ. դուք խնդիրք քուէի դնելու կաճապարէք՝ դեռ վիճարանութիւնը փակեալ յայտարարած չըլլալով. ուստի եթէ դարձեալ պնդէք ու ինձ խօսիլ չըտաք, այն ատեն պիտի հարկադրիմ կարծելու թէ խնդիրն այսօր յետաձգելու դիտում ունիք» :

Իմ այս խօսքիս՝ ձեր տուած պատասխանին դէմ ըսած խօսքերս բնաւ նըշանակուած չեն, որոյ մոռացութիւնը կրնայ դժբաղդարար ձեր հանած հետեւութեամբ կնքել իմ խօսքերս. ուստի պէտք է որ սա խօսքերն ալ ձեզ տուած պատասխանիս կցուին :

« Ատենապետ փաշա՛. չեմ ընդունիր այդ թշնամանք բառն իրրեւ իմ ըսած խօսքիս հետեւութիւն. ես բնաւ ձեզ թըշնամանելու մտօք ըսած չեմ այդ խօսքը, և չեմ ուզեր որ այդպիսի շարաշար հետեւութիւն մը հանէք՝ եթէ երբէք խնդիրըն յետաձգել չէք ուզեր : Ես կանոնապահ եմ. երբ ինձ խօսք տաք՝ այն ատեն պիտի խօսիմ. քանի որ ըստ կանոնի խընդիրը քուէի դրուած չէ և վիճարանութիւնը դոցուած չէ, իրաւունք ունիմ խօսելու : Սա ալ պէտք է գիտնաք թէ այս պարագայիս մէջ անպատեհ կերպիւ ՚ի կարգ հրաւիրելը բնաւ ազդեցութիւն չունի » :

Այս խօսքերն արտասանելէս ետեւ նըստայ, և չուզեցի այլ ևս խօսիլ :

Գարձեալ՝ 289 երես Բ. էջ. երբ Սըրբազան Նախագահը խնդրոյն ստիպողականութեան վրայ ութ օրէն յառաջ նիստ դումարելու առաջարկութիւնն ըրաւ ժողովին, և միաձայն հաւանութեամբ խնդրոյն ստիպողականութիւնն ընդունուեցաւ, ըսի :

« Եստ շնորհակալ եմ, Սըրբազան Հայր, որ խնդրոյն ստիպողականութիւնը ձանչել տուիք. ես ալ սոյն ստիպողականութեան վրայ խօսելու համար խօսք ուզած էի. դուք իմ բաղձանքս լիովին կատարեցիք » :

Իմ այս խօսքիս ի պատասխան Սըրբազան Նախագահն ըսաւ .

« Տեսաք հիմա ի՞նչպէս ձեր ուզածը կատարեցաւ » :

Գարձեալ շնորհակալութիւն յայտնեցի. այս խօսքերը բոլորովին մոռցուած են. կուզեմ որ արձանագրուին, որպէս զի սրխալ մեկնութեանց ենթակայ չըլլան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում ատենագրութիւնը ժողովին գործոց պատկերը պիտի ներկայացունէ, իւրաքանչիւր ատենարանի խօսքերը ճշգրտութեամբ պէտք է արձանագրուին, որպէս զի ստուգապէս պատկերացնեն ժողովին մէջ եղած դարձուածքները. բայց այս ըլլալու համար արտաքոյ կարգի արագագիր արձանագրող կամ կանոնաւոր սղագրութիւն պէտք է. ապա թէ ոչ՝ արձանագրութիւնն էվէլ պակաս կըլլայ : Արձակեան էֆէնտիի դիտողութեան գալով՝ այն խօսքերն որ մոցուեր են կըսէ, ևս դուրսը լսեցի իրմէն, բայց աստ ժողովին մէջ չլսեցի և չեմ ալ կարծեր որ ըսուած ըլլան. վասն զի եթէ Արձակեան էֆէնտին ըսած ըլլար թէ « դիտում ունիք ըսելով թշնամանելու դիտում ունեցած չէ », ո՛չ այն աղմուկը տեղի կունենար որ ժողովիս ներդաշնակութիւնը խանգարեց, ո՛չ ևս հարկ կ'զգայի բողոքելու և ի կարգ հրաւիրելու, և ո՛չ Սըրբազան Նախագահիս ժողովէն ետքը խորհրդարանին մէջ Արձակեան էֆէնտին թըշնամանաց դիտում չունենալը խոստովանիլ հրաւիրելու կարօտութիւն կը տեսնէր :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը վըկայեմ թէ Արձակեան էֆէնտի խօսեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛, որովհետեւ դուք ձայնակից էիք իրեն և մասնակից յարուցած աղմկին, կրնաք այդպէս վկայել :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ո՛չ, չեմ ընդունիր զայդ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փալով Արձակեան էֆէնտիի դիտողութեան երկրորդ կէտին, այն է թէ երբ Սըրբազան Նախագահն ութ օրէն յառաջ ժողովը դու-

մարեմ ըսեր է, Արձակեան էֆէնտի շնորհակալութիւն յայտնեք է, ասոնք մասնաւոր խօսակցութիւններ են, որոց հետքը չկայ ատենագրութեան մէջ. արձանագրող պաշտօնեայներուն նօթերը կըրնան քննուիլ. բայց չեմ կարծեր որ ասանկ մեծկակ պարբերութիւններ՝ եթէ կան՝ մոռցուին և պակսին ատենագրութեան մէջ :

ԱՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Իմ խօսքերս, ինչպէս որ հիմա ըսի, ճիշդ այնպէս արտասանած եմ այն օր յատենի աստ. դուք՝ Ատենապետ փաշա՛, եթէ կը կարծէք որ խօսքերս փոխոխուած ըլլան կամ ճշգրտներկայացուցած չըլլամ, պատճառն այն է որ դուք նոյն օրը բաւական յուզուած էիք և իմ խօսքերս ձեզ դէմ իրր յարձակմունք ըմբռնեցիք, մինչդեռ այնպէս չէր : Ահաւասիկ վկաներ կան, իմ քովս նստողներուն հարցուցէք, բարձր ձայնիւ և չէ թէ մասնաւոր խօսակցութեան ձեւով խօսած եմ, ուստի կաղաչեմ որ արձանագրուին նոյն խօսքերս :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատոնք միջանկեալ խօսքեր են. շատերնիս ալ նոյն աղմկալից պահուն շատ բաներ խօսեցանք ասանց կանոնաւորապէս խօսք առնելու. ևս ալ յայտարարեցի որ Արձակեան էֆէնտիին խօսքը Ատենապետին թշնամանք է, կը բողոքենք, որն որ չէ նշանակուած. եթէ ձերն արձանագրուիլ պէտք է, մերն ալ պէտք է արձանագրուին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը յիշեմ որ նոյն օրը Արձակեան էֆէնտի ծանր ակնարկութիւն մ'ըրաւ Ատենապետ փաշային դէմ. ես ալ բողոքեցի, ամենն ալ կը բողոքեն այդ առթիւ. սակայն այսօրուան ըսածները ճիշդ նոյն օրն ըսած ըլլալը չեմ կրնար հաստատել :

Իսկ իմ խօսքերուս մասին՝ 284 երես Ա. սխնակ, տպագրական սխալ մը կայ. վեցերորդ տողը հինգերորդ տողին հետ ետեւ ու առաջ անցեր է, զոր պէտք է ուղղել այսպէս .

« . . . Պատերէթ անուն տաճիկ լրա-

գրին գրածները մեր ազդին դէմ և այդ պատճառաւ ժողովիս մէջ անցածները իրաւ է թէ . . . նա » :

Կը յիշեմ որ նոյն օր Պատերէթ լրագրին հրատարակութեանցը վրայօք երկարօրէն խօսեցայ. ատենագրութեան մէջ թերի է իմ խօսքիս այդ մասը. սակայն կարեւորութիւն մը չունենալուն համար զանց կընեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ դիտողութիւն ունեցող չկայ, ժ.Պ. նստի ատենագրութիւնն եղած դիտողութիւններով հանդերձ քուէի կը դնեմ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դուք անգամ մը խօսեցաք. կանոնագրութիւնը շներեր ատենագրութեան վրայ մէկ անգամէն աւելի խօսիլ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Առջի անգամու խօսքս ուրիշ խօսքին ճշգրտեանը վկայելու համար էր միայն. այժմ բուն իմ խօսքիս վրայ դիտողութեան համար խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կրնար թոյլ տալ ձեզ կրկին խօսելու՝ քանի որ Արձակեան էֆէնտիի խօսքին ատեն խօսք ուղեցիք և խօսեցաք. դուք փոխանակ ձեր խօսքին վրայ ունեցած դիտողութիւննիդ յայտնելու՝ ուրիշ բան խօսեր էք եղեր, այդ չեմ գիտեր, բայց սա՛ գիտեմ որ կանոնը կարգիլէ ձեր կրկին խօսիլ ուզելը :

Զայս ըսելով Ատենապետ փաշան ժ.Պ. նստի ատենագրութիւնն եղած դիտողութիւններով հանդերձ քուէի դրաւ, որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ Ժողովէն :

Յետոյ Ատենապետ փաշան ժ.Ն. նըստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխաններն :

ՄԷԼԻԲԵԱՆ Մ. ԷՖ. — Ժ.Ն. նստի՝ 296 երեսի Ա. էջին մէջ Ատենապետ փաշան՝ ատենաբանալու որոշեալ ժամուն փոփոխութեան մասին Եուսուֆեան էֆէն-

տի ըրած առաջարկութեան առթիւ զի-  
տողութիւն մը ըրած է, որուն և ես ձայ-  
նակից գտնուեցայ թէ և, սակայն առե-  
նադրութեան մէջ նշանակել մտադրած է:  
Յ երեսօթխանաց կողմէ ներկայացեալ  
գրաւոր բողոքն ստորագրողներէն մէկն  
ալ ես ըլլալով, կը փափաքիմ որ այս զի-  
տողութիւնս արձանագրուի:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Ժ. նստի  
301 երեսի Բ. էջին մէջ խօսքիս իմաստը  
չհասկցուելու չափ թերի է. խօսքս ամ-  
բողջ արձանագրուած ըլլալու համար պէտք  
էր ըլլալ այսպէս. « Ազգային ժողովը  
Վարչութեան կողմէ ընդունած առաջար-  
կութեան պէտքն որոշելու յանձնարմ-  
բին յանձնած ըլլալով, թէ և մտքէս չէր  
անցնէր որ անոր տեղեկագրին վրայ դեռ  
չխօսուած փաստարանելու հրաւիրէր Գի-  
ւանն զյանձնարման, մանաւանդ՝ երբ  
ոչ որ երեցաւ դեռ ընդդիմարանող, այ-  
սու ամենայնիւ կը յայտարարեմ թէ յանձ-  
նարմբին անդամներն իրենց պատճառա-  
բանութիւնները դռնբաց նստի մէջ ընե-  
լէ վախ մը չունին, և եթէ Ատենապետ  
փառային խոհեմութիւնը կը ներէ՝ թող  
դռնբաց նստի մէջ վիճարանութեան են-  
թարկէ այսպիսի փափուկ խնդիր մը »:

Նոյն նիստ՝ երես 302 էջ Ա. Խօսքիս  
երկրորդ պարբերութիւնը պիտի ըլլայ  
այսպէս. « Գալով մեր պաշտօնին, Ատե-  
նապետ փառային ինչպէս ալ հասկցած ըլ-  
լայ, մեք չէինք կրնար կարծել որ ընդ-  
դիմարանող կամ հերքող չեղած ատեն  
ալ փաստարանելու պարտաւորութիւն ու-  
նենայինք. այլ կը կարծէինք թէ այն պա-  
րագային մէջ պէտքին ընդունելութեան  
տեղեկագիրը հոս բերելէ ետե մեր պաշ-  
տօնը կը լրանար »:

Նոյն նիստ՝ երես 303 էջ Բ. Խօսքիս  
չինգերորդ տողէն սկսեալ ատենագրու-  
թիւնը պէտք է սրբագրուի այսպէս. « Երբ  
Գիւանը տեղեկագիրը բերող յանձնա-  
խմբին առաջարկութիւնը բաւական չը  
գտնէր դռնփակ ընելու, երբ խնդրոյն  
արտաքոյ կարգի և փափուկ ըլլալը դարձ-  
եալ բաւական չհամարիր, միթէ Փափագ-

եան էֆէնտի ըսածին պէս կատարեցի  
խնդիր մ'ունենալու է որ դռնփակի պէտք  
ծագի »:

Նոյն խօսքիս երկրորդ պարբերութեան  
վերջին մասը նմանապէս պէտք է սրբագ-  
րուի այսպէս. « Իւր պատճառարանութիւ-  
նըն այնպիսի խնդրոյ մը վրայ պիտի ըլլայ,  
որ եթէ անոր վրայ ըլլալիք վիճարանու-  
թիւնը ճապարհի, կրնանք հաւանականա-  
բար կէս ճամբան դռնփակ նիստի հարկ  
տեսնելու անպատեհութեան մէջ իյնալ.  
ահա այս է ամենէն մեծ պատճառը դը-  
ռնփակ նիստ ուղեկնուս, և այս կէտին  
վրայ կը հրաւիրեմ մասնաւորաբար ժողո-  
վոյ ուղղութիւնը »:

Սրիչ դիտողութիւն ընող չըլլալով,  
Ժ. նստի ատենագրութիւնն ալ հանդերձ  
վերողբեալ դիտողութեամբ քուէի դըր-  
ւեցաւ և միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆ-  
ԻՆՅԱԻ ժողովէն:

2.

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ատենապետ փառային յայտնելով որ  
քանի մի երեսօթխաններէ նամակներ ե-  
կած են իրենց բացակայութեան պատ-  
ճառը ծանուցանող, նախ Մանկասար-  
եան Խաչատուր էֆէնտի նամակը կար-  
դաց, որով կը յայտնէր թէ 13 րդ շըր-  
ջանակի ընտրողական ժողովոյ անդամակ-  
ցութեան պաշտօն ունենալուն համար  
այսօր ժողովին չպիտի կրնայ գալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մանկասար-  
եան էֆէնտի այնպիսի պատճառ մը մէջ  
կը բերէ, որ թէ եւ նախատեսուած չէ  
մեր կանոնադրութեան մէջ, սակայն կըր-  
նայ բանաւոր համարուիլ և ըստ իմ կարծ-  
եաց՝ իբր օրինաւոր բացակայութիւն ըն-  
դունուիլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի որ  
կանոնադրութեան մէջ այնպիսի տըրքա-  
մագրութիւն մը չկայ, ըստ իս՝ պարզա-  
պէս բացակայ նշանակուելու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այնպիսի կա-  
րեոր պարագայ մը կը յայտնէ՝ որ թա-  
ղին մէջ հրկիզութիւն ըլլալու չափ զօրա-  
ւոր կրնայ սեպուիլ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իմ կարծեօքս  
Մանկասարեան էֆէնտի ցուցած պատ-  
ճառն իբր օրինաւոր բացակայութիւն կըր-  
նայ նկատուիլ, թէ և կանոնադրութեան  
մէջ չկայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ըստ կանո-  
նի չկրնար օրինաւոր բացակայ նշանակ-  
ւիլ, բայց որովհետեւ Մանկասարեան է-  
ֆէնտի այսօր երրորդ անգամն է որ բա-  
ցակայ կը գտնուի առանց օրինական պատ-  
ճառի, ըստ կանոնի հրաժարեալ չհամար-  
ւելու համար պէտք է դրել իրեն և ծա-  
նուցանել որ ուրիշ անգամ եթէ այսպիսի  
պատճառներ մէջ բերէ՝ չեն կրնար ըն-  
դունուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում թեր  
ու գէ՛մ մէկ մէկ անգամ խօսուեցան, ե-  
թէ բաւական կը համարիք՝ քուէի պիտի  
դնեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնը քը-  
ւէի չդրուիր:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Մանկասար-  
եան էֆէնտի անկեղծօրէն յայտնած է  
իւր բացակայութեան պատճառը. եթէ  
գրած ըլլար թէ հիւանդ է, այն ատեն  
չպիտի խօսէինք. միթէ ճամբիտը խօսե-  
լուն համար պէտք չէ՞ որ իւր բացակա-  
յութեան պատճառն իբրև օրինաւոր ըն-  
դունինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ժողովը կը  
հասնի՝ խօսքը չերկարենք, և քանի որ եր-  
կու կարծիք կայ, քուէի դնենք և լմնցը-  
նենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այնպիսի խընդ-  
րոյ մը համար քուէ կուզէք, որուն վրայ  
ժողովն ՚ի պաշտօնէ տեղեկութիւն մը չու-  
նի. չըջանակ ըսածն ի՞նչ է չգիտենք.  
երբ Օսմանեան Սահմանադրութեան գոր-  
ծողութիւնը պաշտօնապէս այս դիւանին  
հաղորդուին, այն ատեն բան մը կրնանք

հասկնալ և ըստ օրինի որոշում մը տալ:  
Իսկ հիմա աւելի լաւ է իմացտալ Մանկա-  
սարեան էֆէնտի՝ որ եթէ ուրիշ անգամ  
ալ այսպիսի պատճառներով երիցս բա-  
ցակայ մնայ, ըստ օրինի հրաժարեալ պի-  
տի համարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն թոյլ-  
տուութեամբ ժողովին օրինաւոր բացա-  
կայ նշանակուիլը կընդունիք. այս կէտը  
քուէի կը դնեմ:

Զայս ըսելով Ատենապետ փառային քուէի  
դրաւ Մանկասարեան էֆէնտի բացա-  
կայութիւնը, զոր ժողովն ընդունեց թոյլ-  
տուութեամբ իբրև օրինաւոր բացակայ  
նշանակել:

Յետոյ Ատենապետ փառային կարդաց  
Խօլտամեան Պօղոս վարդապետի և Պէ-  
չիրեան Ալիքսան էֆէնտի նամակներն,  
որոց առաջինն առժամանակեայ ճամբոր-  
դութեան և երկրորդն անձնական տկա-  
րութեան պատճառաւ բացակայութիւն-  
նին կը յայտնէին:

Ատենապետ փառային այս երկուքին  
բացակայութեան օրինաւորութիւնը ներ-  
կայութեան տուամբին մէջ նշանակել տա-  
լէ ետե, յաւելցնելով որ Պէչիրեան է-  
ֆէնտի ժողովին ներկայացնելու խընդ-  
րանօք գրաւոր առաջարկ մը ներփակեալ  
ղրկած է իւր նամակին հետ, յայտարա-  
րեց որ երբ կարգը գայ՝ ժողովին պիտի  
հարցնէ թէ նոյն առաջարկն իբրև բացա-  
կայ երեսօթխանի մը կողմէ եկած՝ ներ-  
կայացնել հա՞րկ է թէ ոչ:

Ի վերջոյ Ատենապետ փառային Ե՛մէ-  
նիճեան էֆէնտի կողմէ եկած հետեւեալ  
բողոքագիրը կարդաց.

Վսեմ. Ատենապետ փառային Ազգ. Ժո-  
ղովոյ.

Կը ցաւիմ որ Ազգային ժողովոյ նըս-  
տին ներկայ չպիտի կարենամ գտնուիլ.  
որովհետեւ երեսօթխանական պաշտօնս  
անարդուած է. . . որ ինչպէս բոլոր Մեծ.  
պաշտօնակցացս՝ նոյնպէս նուիրական է և

ինձ. ուստի բողոքելով յանուն երեսփոխանական պատուոյն ինձ դէմ եղած անարդանաց, պատկառելի ժողովոյդ որոշմանը կ'սպասեմ:

28 յունվար 1877 Ազգ. երեսփոխան Յ. Եփէնիճեան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եէմէնիճեան էֆէնտի բողոքագիրը թէև այնչափ մութ գրուած է որ բան մը չհասկցուիր, բայց ես եղելութեան վրայ քիչ շատ տեղեկութիւն ունենալով կրնամ բացատրել: Նաստրդ Մեծ-Եպարքոս Միտհաթ փաշային մեր Պատրիարքարանն այցելութեան եկած օրը խօսք մը անցեր է Սրբազան Պատրիարքին և Եէմէնիճեան էֆէնտիին մէջ լսեցի զայս և երկիցս Նորին Սրբազանութեան հարցուցի, ոչ ճանչցաւ զինքն և ոչ յիշեց այնպիսի խօսք մը ըսած ըլլալն իրրև առ ազգային երեսփոխան մը: Ար կարծեմ որ Եէմէնիճեան էֆէնտի կողմէ սխալ ըմբռնում մը կայ այս պարագայիս մէջ. ուստի կառաջարկեմ որ Ատենապետ փաշան յանձն առնու առանձին տեսնել և խօսիլ Եէմէնիճեան էֆէնտի հետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատոր ժամանակն անցած է, կարծեմ. գործը Ազգ. ժողովոյն զիւանը գալ հասնելէն ետքը, միայն Ատենապետն ո՛ր և է տնօրէնութիւն ընելու իրաւունք չունի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եէմէնիճեան էֆէնտի կը բողոքէ թէ իւր երեսփոխանական պատիւն անարգուեր է, բայց չը բացատրեր թէ ի՞նչ կերպիւ և որո՞ւ կողմէ անարգուեր է. պէտք է այս մասին իրմէ գրաւոր բացատրութիւն ուղուի, որպէս զի այնուհետև ժողովը տեսնէ թէ նկատողութեան առնուլ հարկ է թէ ոչ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես այս խնդրոյն վրայ Սրբազան Պատրիարքն ալ հարցուցած եմ, Եէմէնիճեան էֆէնտին ալ բնաւ խնդիր յարուցանելու տեղի չկայ. սրտին զայրութիւնն այդ բողոքը գրեք զըրկեր է. ես չէ թէ խնդիրն ասկէ դուրս նետելու դիտմամբ առաջարկեցի որ Ատենապետ փաշան

նապետ փաշան յանուն ժողովին ստանձնէ այս խնդրոյն կարգադրութիւնն, այլ ստուգած ըլլալով որ այնպիսի չիտի օրուան մը մէջ համոզմամբ եղած բան մը չէ, չուզեցի որ մեծ կարևորութիւն մը առնու այս գործը. մանաւանդ որ երկու անգամ հարցուցած եմ Սրբազան Պատրիարքին, և յայտարարած է թէ զինքը չէ ճանչցած:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեսփոխան մը ցաւ կը յայտնէ իրեն դէմ եղած անարգութեան համար՝ առանց պատճառը բացատրելու. Փափազեան էֆէնտի կառաջարկէ որ զիւանը միջամտէ յանուն ժողովոյ, և երբ զիւանը միջամտէ՝ հարկաւար զիւանքն ի վերջոյ պիտի տեղեկագրէ ժողովոյն: Քրիստոսաուր էֆէնտի առաջարկութիւնն ալ գրեթէ նոյն է: Եթէ ուրիշ դիտողութիւն չկայ, քուէի կը դընեմ Փափազեան էֆէնտի առաջարկութիւնը:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Փափազեան էֆէնտի առաջարկութիւնն, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն:

Նոյնպէս Եէմէնիճեան էֆէնտի այսօրուան բացակայութեան օրինաւոր ըլլալը ժողովին հաճութեամբ նշանակուեցաւ ներկայութեան տուժարին մէջ:

Ի վերջոյ Ատենապետ փաշան ծանուցանելով նաև թէ երեսփոխաններէն Մամիկոնեան Միքայէլ և Մէլիքեան Եղիազար էֆէնտիներն անձնական տկարութեան պատճառաւ բացակայ լինելին իմաց տուած են՝ առաջինը Ալաճաճեան էֆէնտի բերնով և երկրորդը Քափամաճեան էֆէնտի բերնով, ժողովին հաճութեամբ օրինաւոր բացակայ նշանակել տուաւ զանոնք ներկայութեան տուժարին մէջ:

3.

ԱՌԱԶԱՐԿՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԱՈՒՐ ԷՖԷՆՏԻ

Ատենապետ փաշան՝ Քրիստոսաուր է.

էֆէնտի կողմէ մատուցեալ յետագայ գըրաւոր առաջարկութիւնը ներկայացուց և կարգաց:

Վսեմախոյլ Ատենապետ փաշա Ազգ. ժողովոյ.

Ամոյս ցին ազգային Պատրիարքարանի մէջ Մեծ-Եպարքոսի այցելութիւնը տեղի ունեցած է, ուր թէ՛ յանուն Ազգային ժողովոյ և թէ՛ Սրբազան Պատրիարք Զօր կողմանէ ուղերձներ խօսուած և Նորին Բարձրութեան կողմանէ պատասխանուած է: Եթէ Ազգային ժողովէս պատշաճ դատուի՝ ժողովոյս մէջ դիտողութիւն ըլլալով արձանագրել ատենագրութեան մէջ, կառաջարկեմ նոյն աւուր գրեանց ժողովոյս ներկայացուիլն ու արձանագրուիլը:

28 յունվար 1877 Երեսփոխան Ք. Ղազարոսեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քրիստոսաուր էֆէնտի այս առաջարկը վիճարանուելիք բան չէ, մանաւանդ թէ օգտակար ազգային պատմութեան համար. եթէ դիտողութիւն ընող չկայ, զիւանը կրնայ Սրբազան Պատրիարքին դիմելով առաջարկեալ գրութիւնը խնդրել ատենագրութեան մէջ ամփոփելու համար:

Ժողովն առանց դիտողութեան հաւանեցաւ սոյն առաջարկութեան:

4.

ԱՌԱԶԱՐԿՈՒԹԻՒՆ ՊԵՇԻՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պահ մը առաջ յայտնեցի որ երեսփոխան Պէշիրեան էֆէնտի իւր բացակայութեան համար գըրած նամակին հետ գրաւոր առաջարկ մ'ալ զրկելով, ժողովին ներկայացնելու խնդիր ըրած է. եկաւ կարգն՝ որ հարցընեմ ժողովին թէ կուզէ՞ Պէշիրեան էֆէնտի առաջարկութեան ներկայացուիլը, կամ թէ ոչ՝ քանի որ ինք այսօր հոս չէ, պահենք ատենագրութեան մէջ

միայն անցնելու և հոն կարգացուելու համար:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կառաջարկեմ որ յաջորդ նիստին մնայ:

ԶԱՅՆԵՐ. — Օրէնքն ի՞նչ կը տրամադրէ այս մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պէշիրեան էֆէնտի անձնագէտ տկար ըլլալուն չէ եկեր և առաջարկութիւն մը զրկեր է. Օրէնքը չներեր որ բացակայ երեսփոխան մը ժողովն գրադեցնէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ որ գոնէ կարգացուի անգամ մը, առաջարկութեան նիւթն իմանալու համար:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Եթէ օրէնքը չներեր, ինչպէս Ատենապետ փաշան յայտնեց, որ բացակայ երեսփոխանի մը խոնդիրը նկատողութեան առնուի, դարձեալ կառաջարկեմ որ ուրիշ նստի մնայ:

Ատենապետ փաշան քուէի դրաւ և ժողովն ընդունեց Պէշիրեան էֆէնտի առաջարկութեան կարգացուիլը:

Հետեապէս առաջարկութիւնը կարգացուեցաւ, որ է՝

ԱՌԱԶԱՐԿ ԱՌԱԶԳ. ԺՈՂՈՎՆ

Վսեմաշուք Ատենապետ փաշա Ազգ. Ընդհ. ժողովոյ.

Եթէ անցեալ մէկ քանի տարիներու վրայ ակնարկ նետեմք, իրաւամբ ստուկում կ'զգամք, վասն զի պատմութեան մէջ զրեթէ նմանը չտեսնուած աղէտք եկան հասան Տաճկաստանի վրայ:

Տաճկաստանի բնակիչ ազգաց շարքին մէջ ամենէն աւելի թշուառն ու ցաւալին Հայն էր միայն. ինչու որ իւր ազգային օրէնքն յեղաշրջեալ, վարկը վտանգեալ, պարտուց տակ ընկճեալ, և նա մանաւանդ պատրիարքական պահու պատկառանքը բոլորովին նսեմացեալ վիճակի մը մէջ կը գտնուէր ու ազգասէր ազգայնոց բերնէն յուսահատական խօսքերէ գտարան մը չէր լսուէր: — Ազգին սոյն վիճակին դարման մը տանելու համար պէտք

էր Յեսուս մը՝ որ բանակը աւետեաց երկիրը տանէր, կամ Քօլոմպոս մը՝ որ նաւը անվտանգ ցամաքն հասցնէր: — Ինչպէս շատ անգամներ, նոյնպէս և այս անգամ նախախնամողն Աստուած փութաց յօգնութիւն հասնիլ՝ պարզեցնելով մեզ արի, արիժան և խոհական Պատրիարք մը, այն է Բարձրաշնորհ Տէր Ներսէս սրբազան արքեպիսկոպոսը, որ ազգին կորուսեալ փառքն ու վտանգեալ վարկը փրկելէ ու վերահաստատելէ զատ՝ կրցաւ այսպիսի տաղնապալից և սպառնական ժամանակի մը մէջ, իւր անձնական հիւանդութեանն հետ մաքառելովն հանդերձ, երկրին և նա մանաւանդ ազգին շահերը արիապէս պաշտպանել:

Թէպէտ և մեր մէջ կան ոմանք՝ որք երկրին շահն ու ազգին շահը իբրև մի և նոյն շահ կը նկատեն, բայց ես այդ սկզբունքը մինչև մէկ աստիճան միայն կըրնամ ընդունիլ, ըստ որում ՚ի վազուց հետէ շատ մը տարբեր շահերու միացեալ մի զանգուած նկատած եմ զՏաճկաստան: — Մեր Սրբազան Պատրիարք հայրը լաւ գիտցաւ և գիտէ վարուիլ այս ամեն շահուց հետ և պաշտպանել միմիայն իւր ազգինը՝ որոյ համար արդէն ուխտեալ է իբրև իւր սրբազան մէկ պարտքը:

Վսեմաշուք Տէր, աւելորդ է ըսել թէ մեք չեմք կարող լիուլի վարձատրել այսպիսի արժանընտիր հովիւ մը, քանի որ չունիմք ոչ իշխանութիւն և ոչ հարստութիւն. ուստի Նորին Սրբազնութեան ազգօգուտ ծառայութիւնքն, ինչպէս նաև լուրջ ու խոհական ընթացքը, փոքր ինչ հակակրօնեալ համար, կառաջարկեմ որ Ազգպատկառելի ժողովս, ինչպէս քանիցս արժանապէս չէ զլացած իւր շնորհակալութիւնն ու փտտահութեան քուէն, նոյնպէս և այս անգամ փութայ Ազգաբարձու փառաւոր պատուանունը յատկացնել Նորին Սրբազնութեան, և զայս պաշտօնապէս հրատարակել առանց միանգամայն պատրիարքական փոխանորդ Արժ. Տ. Յովհաննէս հօր տարած անձանձիր աշխատանքը մասին իւր խորին շնորհակալութիւնը մատուցանել մոռնալու:

տանաջը մասին իւր խորին շնորհակալութիւնը մատուցանել մոռնալու:

27 յունվար 1877 Ա. Գ. Պեշէք

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լսեցիք. Պէշիրեան էֆէնտի կառաջարկէ Ազգաբարձու տխուրը յատկացնել Սրբազան Պատրիարքին, միանգամայն Նորին Սրբազնութեան փոխանորդին շնորհակալութիւն մատուցանել: Թէ և Սրբազան Պատրիարք Հօր մեծարանք մ'ընելու նպատակն ունի այս առաջարկը, սակայն չենք կրնար անմիջապէս վիճարանութեան ենթարկել առանց նախաքննութեան յղելու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հարկ չկայ մեք ամեն ատեն մեր Սրբազան Պատրիարքէն շնորհակալ ենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սովորութեան հակառակ է այդ եղած առաջարկութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախաքննիչ գիււանին անկ է ըսել ատենք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մեր ներքին կանոնը չպահանջեր որ անպատճառ ամեն խնդիր նախաքննութեան յղուի. եթէ ժողովն սկզբունքը ընդունի՝ կը յղէ նախաքննութեան: Ըստ իս՝ նախաքննութիւնը մը պէտք է մերժել այս առաջարկութիւնը. վասն զի մեք արդէն Սրբազան Պատրիարքին ազգասիրութեան վրայ կասկած մը չունինք որ քննութեան նիւթ ընենք յանձնաժողովի կամ գիււաններու զրկելով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օգտէն էֆէնտի նախաքննութեան կառաջարկէ. այսինքն՝ խնդիրը նախաքննութեան յղելէ առաջ ընդունիլ կամ մերժել անոր սկզբունքը: Նախաքննութիւնը վիճարանութիւնը կարճելու համար է: Ուրիշ խօսք ուզող կա՞յ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Մեք՝ որ ցրտին գիտնալով եկեր հոս կ'սպասենք, այդ խնդիրը կարծեմ չկրնար զմեզ տաքցնել. դաստիարակութեան խնդիրը կայ գիււանին գրասեղանին վրայ, կաղաչեմ, զայն ներկայացուցէք, մեք անով միայն կըրնանք ցրտոյն հանդուրժել:

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պէշիրեան էֆէնտի տեսնելով որ Սրբազան Պատրիարքն ազգին վարկը բարձրացուցած է և, կառաջարկէ Ազգաբարձու տխուրը Սրբին Սրբազնութեան: Ենթադրելով որ ասի բոլորովին անտեղի առաջարկութիւն մ'իսկ եղած լինի, գոնէ քաղաքավարութեան համար, փոխանակ նախաքննիչ գիււանին, և անկէ զալիք տեղեկագրին վրայ մերժենք կամ ընդունինք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մէրեէմ-Գուլի էֆէնտին կառաջարկէ գոնէ քաղաքավարութեան համար յղել նախաքննութեան. ես ալ կառաջարկեմ որ գոնէ քաղաքավարութեան համար կանխաժընդով մը մերժենք. վասն զի ինչո՞ւ համար աշխարհի առջև այսպիսի բան մը ընենք, քանի որ այսօր մեր խորհրդարանական տարեգլուխը կամ նոր բացումը չէ, ո՛չ ալ տարեգլխի առթիւ համարառութեան ժամանակ է, որպէս զի առիթ ունենանք Սրբազան Պատրիարքին գործոց քննութիւնն ընել և ըստ այնմ շնորհակալութիւն կամ տխուր մը տալու համար քուէ առաջարկել. ուրեմն ինչ տխուր որ Սրբազան Պատրիարքին համար պիտի առաջարկենք, պահենք մեր խորհրդարանական տարեգլխուն:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Օրաձգում կառաջարկեմ մինչև համարառութեան ժամանակ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կարելի չէ օրաձգել. վասն զի խնդիրը քննուած և պարզուած չէ. կա՞մ պէտք է նախաքննութեան յղել և կա՞մ նախաքննութիւնը վերցնել այս ատենանէն. ուրեմն այս վերջին երկու կէտերէն մէկն ընդունելու համար խնդիրը քուէի կը դնեմ:

Զայս ըսելով Ատենապետ փառանքաւոր էի դրաւ հետզհետէ առաջին անգամ նախաքննութեան յղումը և յետոյ կանխաքննութիւնը մեր խնդրոյն մերժումը:

Ժողովը 11 քուէով ընդդէմ 9 ի չըն-

դունեց Պէշիրեան էֆէնտի առաջարկութիւնը նախաքննութեան յղել, այլ նախաքննութիւնը անոր ընդունն ՈՐՈՇԵՑ:

4.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Դիւանը կարգաց հետևեալ տեղեկագիրն՝ որ Դաստիարակութեան գիււանի կողմէն եկած էր.

Ամենապատիւ Սրբազան Հայր Նախագահ Ազգային ժողովոյ.

Դաստիարակութեան գիււանս ստանալով Ձեր Բարձր Սրբազնութեան թիւ 377 և 3 դեկտ. 1876 թուականաւ հրամանագիրն, ընդ նմին և Ազգային ժողովոյ Մայր Դիւանին պաշտօնագիրն, որով կը ծանուցուէր թէ երեսփոխան Փափաղեան Ս. էֆէնտի ազգային դաստիարակութեան խնդրոյ մասին մատուցած առաջարկութիւնն Ազգային ժողովն ուշադրութեան առնելով որոշած է 1870 էն մինչև ցարդ Ուսումնական խորհրդոց կողմէն հրատարակեալ համարատուութեանց տեղեկագրերը Դիւանիս նկատումանը և տեղեկագրութեանը ենթարկել, Դիւանս նկատողութեան առնելով յիշեալ տեղեկագրերը, ընդ նոսին և նոյն ամաց Քաղ. ժողովոց համարատուութեանց տեղեկագրերէն դաստիարակութեան վերաբերեալ մասերը, նաև 1865-66 թ Ուսումն. խորհրդոյ հրատարակած առաջին երկամեայ համարատուութեան տեղեկագիրը և վարժարանաց կանոնադրութիւնը և, որոնց յիշատակութիւնը 70-71 և 72-74 թ Ուսումնական խորհրդոց տեղեկագրերուն մէջ կար, կը փութայ այսօր իր տեղեկագիրը մատուցանել Ազգային ժողովոյ:

1870-71 թ Ուսումն. խորհուրդը (որ Կրթական անունով ճանչցուած է), իւր միամեայ պաշտօնավարութեան սկիզբը հետևեալ երկու կարևոր որոշումներն ըրեր է.



1. Թաղային նախնական դպրոցներէն զատ կեդրոնական դպրոցներ ալ հաստատել թաղերուն մէջ .

2. Գաղտնիքներն ու անոնց Հողաբարձութիւնները կարգաւորելու դրութեան մը ենթարկել, և դպրոցային Հողաբարձութեանց և Թաղ խորհրդոց փոխադարձ յարաբերութիւնները որոշ սահմանի մը ներքե զենել :

« Բայց, կըսէ յիշեալ տեղեկագիրը, այս որոշումները գործադրել չկարողացաւ խորհուրդս, վասն զի գործադրելու միջոցներէն զուրկ էր բոլորովին, մանաւանդ որ Արթուրի խորհրդոց կամ որ նոյն է Ազգային վարչութեան կրթական մասին իրաւասութեան սահմանը ճշդիւ որոշուած և բոլոր ազգային վարժարանաց ու անոնց հողաբարձութեանց հետ իւր յարաբերութիւնները սահմանուած չեն » :

Հետեւաբար յիշեալ խորհուրդը գոնէ ապագային պատրաստութիւն տեսնելու համար ազգային վարժարանաց փիճակը քննելու և տեղեկանալու որոշում ըրեր, և նոյն քննութեանց ու տեղեկութեանց արդեանցը հետ ութ ամենակարևոր առաջարկութիւններ մատուցանելով կնքեր է իւր տեղեկագիրը, որք են .

1. Մայրաքաղաքիս թաղերուն իրարու մերձակայ գտնուող վարժարանները միացնելով կեդրոնական ուսումնարաններ հաստատել, իւրաքանչիւր թաղի մէջ նախակրթարան մը թողլով, և քանի մը բարձրագոյն կարգի վարժարաններ բանալ դաւառապալուսները .

2. Գաղտնիքական տեսչութիւններ հաստատել գաւառաց մէջ, որք կեդրոնական Արթուրի կամ Ուսումնական խորհրդոց հետ յարաբերութիւն ունենան .

3. Գաստուուներ և վարժուչիներ հասցնելու համար երկու սեռի գոնէ առայժմ երկու դպրոց հաստատել .

4. Նախնական և երկրորդական վարժարանաց համար դասագրքեր որոշել .

5. Ուսումնական կաճառ կամ ակադեմիա մը կազմել .

6. Արթուրի խորհրդոց հրատեանաց ներքե թոշակաւոր պաշտօնատարներ կարգել .

7. Ընդհանուր վարժարանաց համար ուսմանց ծրագիր մը պատրաստել .

8. Վանոնադրութիւն մը հաստատել Արթուրի խորհրդոց և վարժարանաց հողաբարձութեանց յարաբերութիւններն որոշելու համար :

1870-71 ամի Քաղ. ժողովն ալ իւր տեղեկագրով Ուսումն. խորհրդոց յիշեալ ամենակարևոր առաջարկութիւնները ներկայացուցած է Ազգային ժողովոյ, ըսելով թէ՛ « անտարակոյս երեսփոխանական ժողովը դաստիարակութեան կենսական մեծ խնդրոյն ստիպողականութիւնը ձանձելով իւր խորին ուշադրութեանը պիտի ենթարկէ զայն » :

1872-74 ի Ուսումնական խորհուրդն թէ՛ իւր նախորդին առաջարկութիւնները և թէ՛ 1865-65 ի Ուսումն. խորհրդոյն աշխատութիւնները աչքի առջև ունենալով, ըստ այնմ իւր ընթացքն ուղղեր է, և Քաղ. ժողովոյ պատրաստած թաղական հրահանգին համաձայն մայրաքաղաքիս Թաղական խորհրդոց հետ իւր օրինաւոր յարաբերութիւններն հաստատելու և վարժարանաց հողաբարձութիւններ կազմել տալու սկսեր է :

Նոյնպէս գաւառաց մէջ հետզհետէ Ազգային Սահմանադրութիւնը գործադրուելու վրայ ըլլալով, Ուսումն. խորհուրդը Քաղ. ժողովոյ որոշմամբ՝ սկսեր է յարաբերութիւններ ունենալ գաւառական Ուսումն. խորհրդոց հետ :

Թէ՛ այս յարաբերութիւններն արդիւնաւորելու և թէ՛ ազգային վարժարանաց ընթացքն միօրինակ բարեկարգելու խորհրդով, Բարեկարգութեան Հրահանգ անունով վարժարանաց կանոնադիր մը պատրաստած է, որն որ Վարչութեան կրօնական և Քաղաքական Խառն ժողովըն յետ քննութեան հաստատած և հրատարակած է ի գործադրութիւն :

Սոյն Ուսումն. խորհուրդն իւր տեղե-

կագիրը կը վերէ հետեւեալ երեք ամենակարևոր առաջարկութեամբ .

1. Հաստատել կեդրոնական ուսումնարան մը կամ վարժապետանոց մը .

2. Սահմանել ուսումնական կաճառ մը, և 4. Պոլսոյ վարժարանաց համար ընդհանուր տեսուչ մը կամ տեսուչներ .

3. Որոշել կեդրոնական վարչութեան հաշուեկշիւոյն մէջ դաստիարակութեան համար գումար մը :

1872-75 ամի Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրն ալ կը հաստատէ Ուսումն. խորհրդոց այս աշխատութիւններն ու առաջարկութիւնները, որոց ամենքն ալ Ազգային ժողովոյ ուշադրութեան ներկայացուցած է :

Նոյնը կը հաստատէ նաև 1874-75 և 75-76 ամաց Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը :

Ահա այս է համառօտ բովանդակութիւն տեղեկագրաց, որոց նախաքննութիւնն դիւանիս յանձնարարեցաւ Ազգային ժողովէդ : Երեսփոխան Տեառք արդէն տեսած և կարդացած են այդ ամեն տեղեկագրերը, ուստի աւելորդ կը համարինք անոնց պարունակութեանց վրայ մանրամասն խօսիլ : Միայն բաւական կը համարինք յայտարարել, ինչպէս նաև անշուշտ մեզ պիտի ձայնակցին երեսփոխան Տեառք, թէ՛ Սահմանադրութեան հաստատութեան ի վեր կազմեալ Ուսումն. խորհուրդը իրենց պարտաւորութեան շրջանակին մէջ ազգային դաստիարակութեան բարեօրման համար հող և փոյթ տարած են, կարևոր նախապատրաստութիւններ աեսած, ազգօգուտ խորհուրդներ և առաջարկութիւններ յղացած են, բայց յուսացուած կամ բաղձացուած արդիւնքը չէ տեսնուած, որուն պատճառները նշանակուած են յիշեալ տեղեկագրաց մէջ :

Սակայն Գիւանս այդ փիճակին ուրիշ պատճառ մ'ալ կը գտնէ, այն է՝ ցարդ դաստիարակութեան խնդիրն Ազգային ժողովոյ ուշադրութեան և քննութեան առարկայ չըլլալը : Աւստի եթէ ցարդ ժո-

ղովոյն գրադուներն ներսծ չեն այս կենսական խնդրով դառելու, դէթ սակեւտը՝ մոնաւանդ պարագայներուն բերմունքէն Գիւանս արժան կը դատի առաջարկել Ազգային ժողովոյ .

1. Ստիպողականութիւն տալ դաստիարակութեան խնդրոյն .

2. Քննել և վաւերացնել Ազգային վարժարանաց Բարեկարգութեան Հրահանգը, որ անցեալ Ուսումն. խորհրդոց կարևոր առաջարկութեանց ամենամեծ մասը կը պարունակէ իր մէջ : Սոյն Հրահանգը Գիւանս քննելով՝ օգտակար գտաւ ազգային վարժարանաց բարեկարգութեան և յատաճիւնութեանը, և զայն կը ներկայացնէ Ազգային ժողովոյ քննութեան և վաւերացմանը, որպէս զի ըլլայ ընդհանուր օրէնք Թուրքիոյ Հայոց ազգային վարժարանաց համար, որն որ ի հարկէ հետզհետէ փորձառութեամբ բարեփոխուելով կը կատարելագործուի :

3. Ընդունել և հաստատել կեդրոնական վարժարանի կամ վարժապետանոցի մը պիտոյքը, որն որ բոլոր վարչութիւններն ընդունած և հաստատած են : Այս պիտոյքը խիստ լաւ բացատրուած է նոյն վարչութեանց համարատուութեան տեղեկագրոց մէջ, զորս երեսփոխան Տեառք խորին ուշադրութեան կը ներկայացնեն և 1872-75 ամի Վարչութեան Քաղ. ժողովոյ որոշումը կրկնելու կը համարինք, որ է՝ « Ղալաթիոյ վարժարանը կեդրոնական ուսումնարանի կամ վարժապետանոցի վերածել, պահել անոր վրէժնախնայութիւնը, և Ղալաթիոյ եկեղեցոյ կառուածիւն և վարձքի եւ կառուածներն այս վարժապետանոցին յարկանել » : Սոյն որոշումը վերահաստատած է 1874-75 և 75-76 ամաց Քաղ. ժողովն ալ, և միայն չէնքին ընդարձակման խնդիրն արդեւ եղած է այս որոշման անմիջական գործադրութեանը : Բայց 1875-76 ամաց Քաղ. ժողովն արտօնութիւն տուած է Ղալաթիոյ վարժարանին կից դասարաններ կառուցանել. սոյն չինութիւնը՝ որ և ապարկ պիտի ըլլար, ըստ որոշման վաւ-

չութեան, Ղալաթիոյ կաղուածական Հո-  
 քարարձութեան միջոցաւ այժմ քառա-  
 յարկ շինուած և աւարտելու վրայ է, որ  
 ահա մեր աչաց առջև է: Սոյն չէնքին  
 շորրորդ յարկին յաւելմամբ ինքնին լուծ-  
 ւած կը համարուի կեդրոնական ուսում-  
 նարանի կամ վարժապետանոցի գործադ-  
 րութեան խնդիրը, որով այժմէն Ազգը  
 կրնայ ունենալ այդ կեդրոնական ուսում-  
 նարանը կամ վարժապետանոցը, որ Ու-  
 սումն խորհրդոյ միջոցաւ կրնայ ծառա-  
 յել նաև ուսումնական կաճառի կամ Ա-  
 կադեմիայի մը, որուն պէտքն ալ յիշեալ  
 տեղեկագրոց մէջ խիստ լաւ բացատրե-  
 ւած է:

4. Կեդրոնական սնտուկին պիւտճէին  
 մէջ յանուն դաստիարակութեան գումար  
 մը սահմանել, որուն մէկ մասը պէտք է  
 յատկանայ Կեդր. ուսումնարանին արդի  
 պիտոյից, վասն զի շինութեանց երեսէն  
 Ղալաթիոյ կաղուածներուն հասոյթին գը-  
 րեթէ 2/3ը պարտուց դրամագլխին և  
 տոկոսին պիտի յատկանայ, մինչև որ  
 պարտքն ամբողջ վճարուի, և յետոյ նոյն  
 հասոյթներն ամբողջ թաղային նախակըր-  
 թական վարժարանին ու Կեդր. ուսում-  
 նարանին յատկանան և մէկ մասն ալ  
 պէտք է յատկանայ Ակադեմիային գոր-  
 ծօն դիւանին և թաղային վարժարանաց  
 տեսչութեան ծախուց:

« Կանոնաւոր դաստիարակութիւնը և  
 իրական յառաջադիմութիւնը դրամի կը  
 կարօտին, կըսեն Ուսումն. խորհուրդք,  
 և ամեն ինչ դրամով կը կատարելագոր-  
 ծուի. դաստիարակութեան համար դրամ  
 զլանալը յառաջադիմութեան խոչընդոտ  
 յարուցանել է, և յառաջադիմութեան  
 դիմադրելը յայտնապէս Ազգն ՚ի կործա-  
 նումն մղել է »:

Պիւտճէին մէջ սոյն գումարին քանա-  
 կութիւնը որոշելը ժողովոյն կը վերաբե-  
 րի՝ նոյն իսկ պիւտճէին քննութեան և հաս-  
 տատութեան պահուն, ըստ պիտոյից Ու-  
 սումն. խորհրդոյ և ըստ տանելոյ Կեդր-  
 սնտուկին:

Կիւանս կեդրակացնէ թէ, Ազգային  
 ժողովը պէտք է որ

1. Ըստ առաջարկութեան Փափագեան  
 Ս. էֆէնտիի դաստիարակութեան խընդ-  
 րոյն ստիպողականութիւն տայ:

2. Օրակարգն անցընէ վարժարանաց  
 բարեկարգութեան կանոնադրին ծրագի-  
 րը, և զայն յողուած առ յողուած քնն-  
 նէ:

3. Հաստատէ 1772-73 ամի Քաղ. ժո-  
 ղովոյ որոշման համաձայն՝ Ղալաթիոյ  
 Կեդր. ուսումնարանի կամ վարժապետա-  
 նոցին հիմնարկութիւնը, և յանձնարարէ  
 Ազգային վարչութեան, ասոր ուսմանց  
 ծրագիրն և ընթացից կանոնադիրը պատ-  
 րաստել և ներկայացնել Ազգային ժողո-  
 վոյ ՚ի վաւերացումն:

4. Որոշէ թէ Կեդր. սնտուկին պիւտ-  
 ճէին մէջ յանուն դաստիարակութեան  
 ծախուց գումար մը սահմանելն անհրա-  
 ժեշտ է, այս գումարին որքանութիւնը  
 որոշելն պիւտճէին սահմանման օրին պա-  
 հելով:

5. Ուսումնական խորհրդոց միւս ա-  
 ռաջարկութիւններն յղել առ Ազգային  
 վարչութիւնն ՚ի պարտուպատշաճ տնօ-  
 րէնութիւն:

Դաստիարակութեան դիւանս ահա-  
 ւասիկ իրեն յանձնարարեալ տեղեկագ-  
 րաց մասին իւր քննութեան արդիւնքը  
 տեղեկագրելով, և այս կարևոր առաջար-  
 կութիւնները մատուցանելով Ազգային  
 ժողովոյ քննութեանն ու որոշմանը, պա-  
 տիւ ունի լինել միշտ:

28 յունվար 1877

Ատենապետ

Յ. Նորթ-

Տեղեկարեր

Պ. Պառնտ-

ԷնֆօսէրճեԱն Տ. էֆ. — Իմ մասին՝  
 նախ շնորհակալութիւն կը յայտնեմ Դաս-  
 տիարակութեան դիւանին, որ այս տե-  
 ղեկագիրը բերաւ ազգային դաստիարա-  
 կութեան խնդրոյն վրայ. երկրորդ շնոր-  
 հակալութիւն կը յայտնեմ այս խնդրոյն

ստիպողականութիւնն առաջարկող պաշ-  
 տօնակցացս. և երրորդ՝ աւելի շնորհա-  
 կալ պիտի լինիմ եթէ ստիպողականու-  
 թիւնն որոշուելով անմիջապէս Օրակարգն  
 անցնի:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. էֆ. — Ես ալ նոյն  
 շնորհակալութիւնը պիտի յայտնէի թէ՛  
 Դաստիարակութեան դիւանին և թէ՛ Ու-  
 սումնական խորհրդոյ. բայց այսօր ստի-  
 պողականութիւնն որոշելու համար մե-  
 ծամասնութիւն ունի՞ ժողովը. միթէ  
 կրնա՞նք առանց խսկական մեծամասնու-  
 թիւն ունենալու օրինաւորապէս որոշում  
 ընել. ես կը տեսնեմ որ մեծամասնու-  
 թիւն չունի այսօր ժողովն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իւթիւճեան է-  
 ֆէնտի կանոնադրական դիտողութիւն մը  
 կընէ, որ կրնար իրաւացի ըլլալ եթէ Օ-  
 րակարգը գտնուած խնդրոյ մը համար  
 ժողովը վճիռ արձակելու վրայ եղած ըլ-  
 լար. վասն զի այն ատեն մեծամասնու-  
 թիւն կը փնտուռի. բայց հիմա այն վի-  
 ճակին մէջ չենք, դեռ ատենական գոր-  
 ծողութեանց մէջ կը գտնուինք. ուստի և  
 հարկ չկայ մեծամասնութիւն փնտուելու  
 ըստ կանոնի:

ՄԵԼԻԲԵԱՆ Մ. էֆ. — Ես ալ շնոր-  
 հակալութիւն յայտնող երկու երեսփո-  
 խանաց կը ձայնակցիմ և կառաջարկեմ որ  
 Դաստիարակութեան դիւանի տեղեկա-  
 գիրը կանխապէս տպեալ հաղորդուի բո-  
 լոր երեսփոխանաց, որպէս զի ամեն ոք  
 ուսումնասիրէ, և յետ այնորիկ վիճարա-  
 նութեան ենթարկուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ դի-  
 տողութիւն ունեցող չկայ, ես ալ փոքրիկ  
 դիտողութիւն մը պիտի ընեմ. ըստ որում  
 այս խնդրոց առթիւ ընելիք որոշումնիս  
 ազգին մէջ իրրև կանոն պիտի տիրէ,  
 հարկ է նախ քան զամենայն վարչու-  
 թեան կարծիքը հարցնել, վասն զի վար-  
 չութիւնն իբրև գործադիր ազգին օրինաց՝  
 կրնայ յետին պահուն առարկել թէ իմ  
 կարծիքս չստացաք, և այնպիսի կանոն  
 մը հաստատեցիք՝ որ ես չեմ կրնար գոր-

ծաղրել. ուստի վարչական տաղճապի  
 մէջ չիյնալու համար հարկ է որ Օրակար-  
 գը անցնելէ առաջ վարչութեան կար-  
 ծիքն առնելու համար նմա յղենք:

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. էֆ. — Այդ ըսածդ ը-  
 նելու համար արժան է որ Օրակարգն  
 անցնի չէ թէ բուն խնդիրն, այլ Դաս-  
 տիարակութեան դիւանի տեղեկագիրն.  
 այն ատեն վիճարանութեամբ պիտի ո-  
 րոշենք՝ վարչութեան յղել կամ հարցը-  
 նել հարկ է թէ ոչ: Ասոր համար պէտք  
 է որ տեղեկագիրն տպեալ օրինակներն  
 օր յառաջ մեր ձեռքը հասնին:

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. էֆ. — Ես ալ Փա-  
 փագեան էֆէնտիի այն կարծիքէն եմ որ  
 տեղեկագիրը տպեալ ցրուի երեսփոխա-  
 նաց յաջորդ նստէն առաջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէ՛ք որ  
 նախ ճշգեկն խնդիրը. դաստիարակու-  
 թեան խնդիր ըսելով թերևս վերացեալ  
 բառ մը մէջ կը բերենք. ստոյգ է որ ժո-  
 ղովս երեսփոխանի մը առաջարկութեան  
 վրայ ուզեց իւր վրայ առնուլ այս խըն-  
 դիրը, վիճարանութեան ստարկայ ընել,  
 և ասոր համար Դաստիարակութեան դի-  
 ւանէն տեղեկագիր մը ուզեց. բայց այս  
 տեղեկագիրը կատարելապէս պարզած չէ  
 խնդիրը. նախ դաստիարակութեան խընդ-  
 րոյն ստիպողականութիւն տալ պէտք է  
 կրտէ. ի՞նչ պէտք է հասկընանք ասկէ.  
 երկրորդ՝ 73 թուականի հրատարակուած  
 ուսումնական հրահանգը վաւերացնել  
 պէտք է կրտէ. այս ի՞նչ ըսել է. միթէ  
 նոյն թուականի վարչութիւնը վաւերա-  
 ցուցած չէ՞ այդ հրահանգը. երրորդ՝ վար-  
 ժապետանոց մը հաստատել պէտք է կը-  
 սէ. այս ալ այնպիսի խնդիր մ'է որ եթէ  
 միայնակ գալու ըլլար ժողովիս, դարձ-  
 եալ վարչութեան չհարցուցած չէինք  
 կրնար որոշել. շորրորդ՝ Պիւտճէի խօսք  
 կընէ. զեռ վարչութիւնը Պիւտճէ չունի  
 օրինապէս վաւերացած, ի՞նչպէս կարելի է  
 չկեցած Պիւտճէի մը մէջ դաստիարակու-  
 թեան համար գումար մը սահմանել, և  
 ա՛յն ալ վարչութեան կարծիքն առնելն

առաջ : Ահա այս կարևոր կէտերուն վրայ զբարձր կարծիք առնելու համար պէտք է տեղեկագիրը նախապէս յղել Վարչութեան : Թերևս պիտի ըսէ Վարչութիւնը թէ սա՛ կամ նա՛ կէտը ես արդէն կը դործադրեմ : Իմ միտքս յետաձգել չէ այս խնդիրն : Եթէ մեզ դադարեցնելու արժանի խնդիր մը կայ, դաստիարակութեան խնդիրն է այն : բայց իբրև սահմանադրական ժողով պէտք է որ խնդիրն որին աւորութեամբ ներս առնենք, որպէս զի վիճարանութեան հիմ գտնենք և ըստ այնմ լուծելու աշխատինք :

**ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.** — Այս խնդրոյն մէջ, ինչպէս որ յիշեցնող եղաւ, վարչական կէտ ալ կայ, օրէնսդրական կէտ ալ վարչական կէտերը կրնանք վարչութեան յանձնել, իսկ օրէնսդրական կէտերը չենք կրնար վարչութեան յանձնել : Այս խնդիրը ժողովին օրակարգն անցնելու առաջարկութիւնն ես ալ կը կրկնեմ. վասն զի օրակարգը չանցնելու բանաւոր պատճառ մը չեմ տեսներ. ստիպողականութիւն ըսելով ուրիշ բան չեմ հասկնար, բայց եթէ ձեռքու համար ժամանակ չկորսընցընելով ժամ մը առաջ օրակարգն անցընել, վարչութիւն և երեսփոխան ամենքը միանալով մէկտեղ խորհիլ, մէկտեղ վիճարանիլ. տարակոյս չկայ թէ վիճարանութեան մէջ վարչութեան վերաբերեալ կէտերը կրնան զատուիլ և օրէնսդրական մասը միայն ընդունիլ : Ուստի պէտք է օրակարգն անցնելու որոշումը տալ անմիջապէս :

**ՉԱՅՆԵՐ.** — Կը կրկնենք Նուրեան էֆէնտի առաջարկութիւնը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Առաջարկութիւն մը կայ խնդիրն իբրև ստիպողական օրակարգն անցնել. առաջարկութիւն մ'ալ կայ՝ նախ Վարչութեան կարծիքն առնուլ և ապա խնդիրն օրակարգն անցնել : Այս երկու առաջարկութիւնները քրէի պիտի դնեմ :

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Ատենապետ փառային ըսածը խնդիրը ձևապահութեան

մէջ խղզել ըսել չէ. թէ որ օրինաւորութեամբ պիտի ընթանանք՝ պէտք է անոր ըսածին հետեւինք : Սակայն որովհետև կըսէք թէ ժամանակ չանցնի, կրնայ այժմէն օրակարգն անցնել խնդիրը, և միև կողմէ տեղեկագրին օրինակը Վարչութեան հաղորդուիլ մինչև 15 օր իւր կարծիքը բերելու պայմանաւ : Այսպէսով խնդիրն ետ մնացած չըլլար և օրինաւորութեամբ ձեր նպատակին կը հասնիր :

**ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.** — Շա՛տ աղէկ, շա՛տ աղէկ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Օգտէն էֆէնտի ըսածը բարեփոխութիւն մ'է, նախ զայն քուէի կը դնենք :

**ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ.** — Բայց եթէ Վարչութիւնը 15 օրէն ետև իւր կարծիքը չբերէ, այն ատեն ի՞նչ պիտի ընենք :

**ՉԱՅՆԵՐ Մ. ԷՖ.** — Ես չեմ կրնար հասկնալ թէ ի՞նչ ըսել է որ երբ ժողովը դործ մը կատարէ, անոր վրայ Վարչութեան կարծիքը պիտի ուզէ : Ժողովը համարառու է. երբ Վարչութեան համարատուութիւն գայ՝ այն ատեն պիտի նայի, և երբ վճիռ տալու վայրկեանին հասնի, այն ատեն Վարչութեան թող հարցնէ. հիմակվրնէ հարցնելու տեղի չը կայ :

**ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.** — Իմ ըսածիս թիրմացութեան տեղի չտրուելու համար նորէն կըսեմ թէ հիմակուրնէ չենք կրնար կապել գործը Վարչութեան հարցընենք ըսելով. թող խնդիրն անցնի Օրակարգը, առաջին վիճարանութեան մէջ խնդրոյն վարչական և օրէնսդրական կէտերը կրնան զատուիլ, վարչական կէտերը Վարչութեան կը յանձնենք : Մեք ըստիպողականութիւն ըսելով ուրիշ բան չենք հասկնար, բայց եթէ դաստիարակութեան խնդիրն իբր կենսական խնդիր այս ժողովը պէտք է ստանձնէ իւր Օրակարգն անցունելով. թէ որ այնպիսի կէտեր նշմարենք՝ որ ուղղակի վարչութեան կը վերաբերին, կրնանք անոր յանձնել, կամ մեր վիճարանութեան մէջ ուր Վար-

չութեան անդամներն ալ ներկայ կը գտնուին, կրնանք հարցնել :

**ՉԱՅՆԵՐ Մ. ԷՖ.** — Ո՛րք են Վարչութեան անդամներն, որոնք ներկայ պիտի դառնուին ժողովիս նիստերուն, և այսօր ներկայ չեն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Կաղաչեմ, եռանդնիս մեզ անդր քան զօրէնս չտանի. չկայ սահմանադրական ազգ մը՝ որոյ երեսփոխանական ժողովն երբ օրէնք մը պիտի հաստատէ, չուզէ կանխաւ Վարչութեան կարծիքն առնուլ : Մեք կուզենք դաստիարակութեան խնդիրը մեր վրայ ստանձնել. բայց սա՛ ալ մտածենք որ մեք սահմանադրական ժողով ըլլալով ի՞նչպէս կրնանք առանց Վարչութեան կարծիքն առնուլ վարժապետանոցի հաստատութեան ձեռնարկել և պիտո՞ճէին մէջ ուսումնական պիտոյից համար գումար մը մտցնելու խնդիրներ որոշել. ապիկա պարզապէս Վարչութեան անվտանգութիւն և կամ անարգանք կենթադրէ. քանի որ Վարչութիւն մը ունինք սահմանադրապէս հաստատուալ, և պատասխանատու այս ժողովին, անոր իրաւասութիւնն է, ինչպէս ուրիշ խնդրոց, նրմանապէս դաստիարակութեան խնդրոյն հոգը տանիլ. աշխատի՛նք մենք ազգին դաստիարակութիւնը բարգաւաճ վիճակի վերածել. բայց հարցունենք նախ Վարչութեան թէ ինք ի՞նչ ըրած է և ի՞նչ կարծիք ունի առաջադրեալ օրինաց վրայ : Ես չուզեցի՛ ի սկզբան այս ամեն բանը մերկապարանոց ընել. բայց կը տեսնեմ որ ձեր ևսանդն զձեզ ա՛յնչափ առաջ կը տանին, որուն ծայրը մինչև անխիսանութիւն կերթայ. ևս չեմ կարծեր որ Ազգային ժողովն իւր Վարչութեան այս կերպով ձրի անարգանք մ'ընելու կամք ունենայ : Ուստի եթէ մէկ կողմէ խնդիրն Օրակարգն անցունելու և միև կողմէ Վարչութեան կարծիքը 15 օրուան մէջ խնդրելու առաջարկութիւնն՝ որ Օգտէն էֆէնտիին է, ընդունիր, կրնաք ամեն կողմը գո՛հ ընել :

**ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.** — Եթէ՛ Ատենա-

պետ փառայ, զիս կ'ակնարկէք այդ խօսքերով, ես այդպիսի մտօք չըսի. իմ առաջարկութիւնս թէ դաստիարակութեան խնդիրն ուղղակի այս ժողովն ինք ստանձնէ, առանց պատճառի չէ. արդէն ժողովը Սահմանադրութեան վերաբնութեան խնդրոյն առթիւ իւր ըրած վիճաբանութեանց մէջ Ուսումն. խորհուրդն ալ միև վարչական ժողովոց պէս ուղղակի երեսփոխանական ժողովոյս պատասխանատու ըլլալու կէտը նկատողութեան առած և այս մասին քուէ մ'ալ տուած է : Ես Վարչութեան հարցնելու կէտը բնաւ մերժել չուզեցի. իմ նպատակս ուրիշ բան չէ, բայց եթէ դաստիարակութեան խնդրոյն ստիպողականութիւն տրուելով Վարչութեան աշխատութեանց մասամբ մը օգնել. վասն զի Վարչութիւնն իւր բազմազբաղ վիճակին մէջ կարող չէ հասնիլ այս խնդիրը հոգալու. այս կերպով իւր բերը քիչ մը թեթեւցուցած կըլլանք :

**ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ.** — Թէ և իրաւացի է Ատենապետ փառային դիտողութիւնը՝ Վարչութեան անվտանգութիւն կամ անարգանք մը չընելու մասին, բայց ես կըսեմ թէ երբէք մտքերնէս անգամ չենք անցուներ Վարչութեան անվտանգութիւն ընել. կը յիշէ՞ք, այս ժողովն էր որ քանի մը նիստ առաջ Վարչական խնդիրներէն հարստահարութեանց մասն ալ պատճառաւ մը իւր մէջ առաւ և յետոյ դարձեալ յղեց Վարչութեան. դաստիարակութեան մասն ալ այնպէս կրնանք ընել. յաջորդ նստին մէջ կը գտնենք այս խնդրոյն օրէնսդրական և վարչական մասերը, և Վարչութեան վերաբերեալներն իրեն կը յանձնենք պայմանաժամաւ մը իւր կարծիքները բերելու համար : Իսկ հիմա չգիտենք՝ ի՞նչ են հարցնելիքնիս. օրակարգն անցնելիքնիս դաստիարակութեան դիւանի տեղեկագիրն է, և ո՛չ դաստիարակութեան բուն խնդիրն. այս տեղեկագիրն՝ որոյ պարունակութիւնը նախորդ վարչութեանց համարատուութիւններէն քաղեալ տեսակ մը համարատուութիւն է, դեռ պիտի սերտենք. պէտք է նախ տե-

դեկադիրն ամբողջովին օրակարգն անցնի և յետոյ անոր մէջ Վարչութեան վերաբերող կէտերը զատուելով՝ Վարչութեան հարցուն: Աստի այսօրուքնէ օրակարգն անցնիլը կառաջարկեմ:

**Տ. ԱՄԲԻՐՈՍԻՍՈՍ Վ.** — Այն դիտողութիւնները թէ՛ Վարչութեան գործն է զատարարակութեան խնդիրը և պէտք է անոր հարցուի, թէ և իրաւացի են և ես ալ պիտի կրկնէի, սակայն ո՞վ կրնայ երաշխաւորել որ քաղաքական զանազան տաղնապններ որք պատահեցան, զարձեալ չպիտի պատահին և զբաղեցնեն ըզմեզ: Արտեսնէք որ Վարչութիւնը 6-7 ամիսներէ ՚ի վեր կազմուած, տակաւին չէ կրցած իւր առաջին նուիրական գործըն եղող Պիւտեճէն պատրաստել և բերել ժողովիս. ինչո՞ւ, վասն զի այնպիսի ստիպողական խնդիրներ եկան, որ ամենէն կարեւորը ետ ձգել տուին. պէտք է նախատեսենք՝ որ Վարչութիւն մը՝ որ այսքան զբաղմունքներով չըջապատեալ է, ե՞րբ ժամանակ պիտի գտնէ զատարարակութեան խնդրոյն վրայ իւր ընդհանուր տեսութիւններն ընել և մեզ բերել: Աստի Նուրեան և Փափազեան էֆէնտիններուն ձայնակցելով և ես կառաջարկեմ որ զատարարակութեան խնդիրն անմիջապէս օրակարգն անցնի. եթէ Վարչութեանէն լոյս առնելու կէտ մը գտնենք, այն ատեն Վարչութեան անդամոց ամենն ալ հրահրենք յառաջիկային մէջ գալ մեր վիճարանութեանց մասնակցիլ և իրենց կարծիքները տալ. որով քիչ ժամանակի մէջ վախճան կառնու խնդիրը:

**ՄԷՐԵԷՄ-ԳՈՒՎԻ Յ. ԷՖ.** — Դատարարակութեան խնդրոյն առթիւ եղած խօսքերուն եթէ մի առ մի պատասխանենք, շատ երկար կըլլայ. ուստի բուն խնդրոյն դատնալով դիտել կուտամ թէ եղած խօսքերուն ամենն ալ երկու կէտի կուգան կը յանգին. նախ՝ տեղեկագիր մը կայ զատարարակութեան զիւանէն մեզ եկած, զոր ժողովը կը փափաքի առանց յարազմանն ուղարկութեան և վիճարանութեան

ենթարկել. երկրորդ կէտն է մեր եռանդէն մղուելով աճապարանօք գործելու մէջ Վարչութեան զպէնէ զգուշանալ: Արտեսնէք որ ամենքս ալ մի և նոյն բանը կրանք առանց իրարու հակառակելու. ոչ որ կըսէ թէ զատարարակութեան խնդրոյն ստիպողականութիւն տալու համար փոյթ չէ թէ վարչական տաղնապ յանէ, և կամ՝ վարչական տաղնապ չյարուցանելու համար զատարարակութեան խնդիրն ետ թողուի, ուրեմն ըստ իս՝ դրժուարութիւն մը չկայ, կրնանք այս խնդիրն օրակարգն անցունելով և միանգամայն Վարչութեան կարծիքն ուղեւորել երկու կէտերն հաշտեցնել: Ասով խնդիրն առանց անպատեհութեան կը լուծուի, և տարակոյս չունիմ որ եթէ խնդիրն այս կերպով քուէի դուրսի, ոչ որ ասոր հակառակ քուէ կուտայ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Ճիշդ ես ալ այդ կերպով խնդիրը քուէի դնել ուղեցի Օգսէն էֆէնտի բարեփոխութիւնն ընդունելով, բայց յետոյ այլ և այլ խօսքեր եղան. Օգսէն էֆէնտի առաջարկութիւնն ամեն կողմ գոհ կրնայ ընել: մէկ կողմէ խնդիրն Օրակարգը պիտի անցունենք և միւս կողմէ Վարչութիւնը պիտի հրահրենք թէ՛ գրով և թէ՛ անձամբ իւր կարծիքները հաղորդել մեզ յառաջիկայ նստին:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Բայց պայմանաժամաւ պէտք է դրել Վարչութեան:

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Ո՛չ. ես պայմանաժամաւ չառաջարկեցի:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Ուրեմն Օգսէն էֆէնտի առաջարկութեան համեմատ խնդիրը քուէի կը դնեմ. ով որ կուզէ որ Դատարարակութեան զիւանի տեղեկագիրն Օրակարգն անցնի և միանգամայն անոր պատճէնը Վարչութեան յղուելով խնդրուի իւր կարծիքը գրով և անձամբ ներկայացնել յաջորդ նստին, ձեռքը վեր վերցնել շնորհ ընէ:

Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ վերագրեալ առաջարկութիւնը:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Ասի խնդրոյն տեսական մասն էր, դանք այժմ գործնականին. դուք կարծեցիք թերևս որ խնդիրն Օրակարգն անցնելուն պէս անմիջապէս կրնանք վիճարանութեանն ալ ձեռնարկել. այս ընելու համար պէտք է որ այսօրուան ստեղծագրութիւնն իս տըլուած մեր ձեռքը հասնի յաջորդ նստէն գոնէ 24 ժամ յառաջ: Բայց ասկէ երկու ամիս առաջ եղած նստին ատենագրութիւնը չստացանք տակաւին տպարանէն. ի՞նչպէս պիտի ընենք:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Այդ մասին պէտք է որ զիւանը Վարչութեան հետ խօսի. ի՞նչ ըսել է որ ժողովս ամեն յարգ կ'ընծայէ Վարչութեան և փոխարինարար նոյնը չգտնէր Վարչութեանէն: Եթէ Վարչութիւնը ժողովին տպագրական գործողութեանց համար ստակ չգտնէր, ո՞ւր է իւր պիւտեճէն, ինչո՞ւ չբերեր: Ի՞նչ է այսինքն յանձնեցէք՝ ես ընեմ, տեղեկագիրն անմիջապէս թող օրինակուի, բնագիրը Վարչութեան և ընդօրինակեալը տպարան դրուի, և առանձին տպել տալով որ առաջ մէյմէկ օրինակ երեսփոխանաց հաղորդուի:

Ար յիշեցնեմ ձեզ, երեսփոխան էֆէնտիններ, որ երկու ամիս առաջ մեր պաշտօնակիցներէն Պէշիրեան էֆէնտին առաջարկութիւն մը բերած էր ժողովին տըլուական գործողութեանց վրայօք. կարծեմ թէ նոյն առաջարկութիւնը Նախաձեռնութեան զիւանին յղուեցաւ. կը հարցնեմ զիւանին, ո՞ւր մնաց այն:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Աղէկ յիշեցուցիք Պէշիրեան էֆէնտի առաջարկութիւնը. Նախաձեռնութեան զիւանի ատենապետ Ռուսինեան էֆէնտի վախճանման պատճառաւ այդ առաջարկութիւնը Մամիկոնեան էֆէնտիին զրկուեք էր, որ անդամն էր նոյն զիւանին. ան ալ ետ զրկեր է պահարանին վրայ սա դիտողութիւնը գրելով:

« Երբ զիւանիս վախճանեալ անդա-

« մին ընտրութիւնն ըլլալով ամբողջանայ, « այն ատեն պէտք է յղել զասի »:

**Մ. Մ-ՔԻՆԻՆ**

Այժմ ասոր համար ի՞նչ կորուէք:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Եթէ Նախաձեռնութեան զիւանն այս գործը չպիտի կատարէ, առժամանակեայ կերպիւրուրիչ զիւան մը կազմելով՝ անոր յանձնել կառաջարկեմ:

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Որովհետեւ այս ժողովը Վարչութեան պատիւը պահպանած է միշտ, և որովհետեւ Վարչութիւնը սա ատենագրութեանց տպագրութեան մասին ամեն օր կանարգէ ժողովս, կառաջարկեմ անարգանաց քուէ տալ Վարչութեան համար: Ի՞նչ ըսել է այս. 15 օրն անգամ մը ատենագրութիւն մը պիտի ունենամք, Վարչութիւնը 2-3 հարիւր դուրուչ չկրնար տալ և ատենագրութիւնն իս հասցնել. ա՛լ ամօթ է, երբեք չըլլէ է այս:

**Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ** էֆէնտի այս անարգական խօսքին վրայ երեսփոխաններէն մեծ մաս մը բողոք բառնալով ժողովարանէն դուրս ելան:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Օգսէն էֆէնտի, այս ատենին մէջ բեմական լեզուի անվայելուչ խօսք ընել չներեր մեր կանոնը. ուրեմն կաղաչեմ ետ առէք այդ խօսքը՝ զոր Վարչութեան համար արտասանեցիք, չմոռնալով միանգամայն որ մեք Վարչութիւն ըսելով երկու ժողով և մէկ նախագահ կը հասկնանք, որ Արքայան Պատրիարքն է:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Ես թէև Օգսէն էֆէնտի այդ առաջարկութեան չեմ կրնար ձայնակից ըլլալ, սակայն երբ ամեն բանի համար ստակ կը գտնայ Վարչութիւնը և ժողովին ծախուցը գայ նև ստակ չկայ կըսէ, այդ չըլլար:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Կաղաչեմ, Օգսէն էֆէնտի, ետ առէք այն խօսքն՝ որով գայթակղութեան տեղի տուիք և ո-

րոյ համար երեսփոխաններէն շատերը կը մեկնին :

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Ես վարչութիւնն անարգելու համար չըսի, այլ գործը, որովհետեւ վարչութեան ըրածն անարգութիւն է այս ժողովին. ատեն մը հազար զուրուշ ամսականաւ նոր պաշտօնեայ մը աւեր էին Պատրիարքարանի դիւանատան մէջ. այդ պաշտօնեայն մեռաւ. թող այն հազար զուրուշն 800 ը ժողովին տպագրական ծախուցը սահմանէին: Ամիսը քանի մը հարիւր զուրուշ խնայելով շէշէ կրնեն կոր զմեզ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Երբ այսպիսի ցաւալի միջադէպեր կը պատահին, դիւանը պարտաւոր է ըստ կանոնի իւր պարտքը կատարել: Տեսէք՝ Օգոսէն էֆէնտի, երեսփոխաններէն շատերը դայթակղելով մեկնեցան. վարչութիւն մը առանց լսելու այսպէս հրատարակաւ դատապարտել չըլլար. և ո՛չ մէկ պարագայի մէջ ներեալ է նախնայն բառ գործածել: Ուստի կրկին կը հրաւիրեմ զձեզ ետ կոչել վարչութեան համար ըսած խօսքերնիդ:

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Իմ ըսածս սա է. քանի որ 15 օրն անգամ մը տեղի ունենայիք 2-5 հարիւր զուրուշի ծախուց համար վարչութիւնն ստակ չտար, ես կամենամ այս բանին վրայ, ապա թէ ոչ մարդ անարգելու դիտում չունիմ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Այս խօսքն ալ մինչև մէկ աստիճան յետո՛ւ կը նշանակէ. բայց փոխարինութիւն չկայ: Խօսքն Ատենադպիր էֆէնտիին է:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Ատենադպրութեան տպագրական խնդրոյն վրայ չէի ուզեր խօսիլ. կ'սպասէի որ Պէշիրեան էֆէնտիի առաջարկութեան պատասխանը դայ նախաձեռնութեան դիւանէն, և այն ատեն խօսիմ. բայց որովհետեւ այս մասին բաւական խօսքեր եղան, ես ալ հարկ համարիմ պէտք եղածն ըսել: Փափագեան էֆէնտի կը բացատրէ թէ ի՞նչ կերպով վարուելու է որ Դատարարութեան դիւանի տեղեկագիրը ութ օրէն ձեռքերնիս

հասնի: Ես կը համաձայնիմ Փափագեան էֆէնտիի և կըսեմ մինչդեռ հարստահարութեանց տեղեկագիրն ութ օրէն կըրցաւ պատրաստուիլ, շատ դիւրին է Դատարարութեան դիւանի տեղեկագիրը չորս աւուր մէջ պատրաստել: Ասկայն խնդիրն աշխատութեան խնդիր չէ միայն. դրամական խնդիր մ'ալ կայ որ ատենագրութեանց հրատարակութիւնը կուչացընէ. այս մասին դարման տանելու համար դիւանը ջանք և զոհողութիւն թէ և չէ խնայած, բայց չէ ալ կըրցած ըստ իւր բաղձանաց ատենագրութիւնները կանոնաւորապէս երեսփոխանաց ձեռքն հասցընել միշտ. ուստի դիւանն այս մասին երբէք պատասխանատու չմնար: Իսկ որովհետեւ խօսք եղաւ թէ վարչութիւնն է պատասխանատու, ես վարչութեան ճիւղերուն միոյն մէջ գտնուելովս կրնամ այս մասին ունեցած տեղեկութիւններս պատկառելի ժողովոյդ հաղորդելով յայտարարել որ եթէ վարչութեան անդամք հոս ներկայ ըլլային՝ կրնային իրենց պատասխանատուութիւնը շատ թեթեւցնել: Պէշիրեան էֆէնտիի առաջարկութեան առթիւ վարչութեան Տնտեսական և ելմըտական ճիւղերը միարանութեամբ յայտարար մը տուած են վարչութեան, զոր հարկաւ հոս պիտի բերէ վարչութիւնը, յորում յանուանէ ցոյց տրուած են այն երեսփոխանք, որ ատենագրութեան տրուեալ թերթերուն գնէն ունեցած պարտքերնին չեն վճարեր, և դժբաղդարար աւելի բողոքողներն անոնք են՝ որ իրենց այս պարտքը չեն հատուցած: վարչութեան պատասխանատուութիւնը նկատողութեան առնուլ ուզող երեսփոխանք պէտք է որ իրենց պարտաւորութիւնն ալ ճանչնան և կատարեն: Եթէ անոնք՝ որ վարչութեան պատասխանատուութիւնը ծանրացնել ուզելով կը կարծեն թէ վարչութիւնն իւր ամեն պիտոյքները կատարելապէս հոգացած է և միայն տպարանին հոգը մնացած, կը սխալին և չգիտեն թէ վարչութիւնն ի՞նչ տաղնապի մէջ կը գտնուի տնտեսութեան մասին:

Այս խօսքերով իմ միտքս վարչութեան համար փաստարան կանգնիլ չէ: Վերջին կէտ մ'ալ ըսեմ. վարչութիւնը հաւանութեամբ Ազգ. ժողովոյ դիւանին ուրիշ տնօրէնութիւն մ'ալ ըրած է Ազգ. ժողովոյ ատենագրութեանց տպագրութեան մասին. ուրիշ անձի մը պիտի յանձնէ տարբեր պայմաններով. այն անձն է Մասիս լրագրոյ խմբագրապետ Իթիւճեան էֆէնտին, որ յանձնառու եղած է այսօրուան նիստէն սկսեալ ատենագրութիւնները տպագրել իւր տպարանին մէջ: Այս կերպով կը յուսացուի որ ատենագրութիւնները կանոնաւորապէս կը հասնին և այլ ևս խնդիր չմնար:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Այս խնդրոյն վրայ ի սկզբան ըրած առաջարկութիւնս կը կրկնեմ. Պէշիրեան էֆէնտիի առաջարկութիւնը կարևոր և ստիպողական ըլլալով՝ նախաձեռնութեան դիւանը պարտաւոր է անոր պատասխանը մինչև 15 օր բերել:

Ատենադպիր էֆէնտին ըսաւ թէ երեսփոխաններն ալ իրենց հաշիւը պէտք է նային. անոնցմէ մէկն ևս ըլլալով՝ կը յայտարարեմ թէ Ազգ. սնտուկին մէջ կանոնաւոր տումար չկայ այս հաշւոյ մասին: Ես ինքնս էի՝ որ երբ կասկած յարուցի իմ հաշուոյս համար, լուծիւն պահեցին, և տեսնելով որ ինչ աւելի հարուստներն ու աստիճանաւորները չեն վճարեր, ես ալ իմս ետ թողուցի: Բայց սա՛ կը հարցնեմ թէ ի՞նչ իրաւամբ բռնի կը պահանջեն մենէ այդ ստակները, և դիւանէն մեզի այդ յանդիմանութիւններն ընել կուտան. թող դայ վարչութիւնը և պատասխանէ. ես իմ մասին կը բողոքեմ և պարտաւոր չեմ համարիր զիս այսուհետեւ ատենագրութեանց տեսարակներուն համար ստակ տալ. վասն զի այդ տեսարակներն իմս չեն, այլ Ազգին են. միթէ վարչութիւնն ալ իւր տպի տուած համարատուութեանց չըջարեարկանաց և այլ գրութեանց ծախքերն իւր քսակէն կը վճարէ, եթէ իւր քսակէն կը վճարէ,

միթէ մեք մինչև այդ տեղուանքը կը յառաջանանք: Թէ որ դիւանադպիր էֆէնտիներն իրենց պարտաւորութիւնը կատարեն իրենց պատկանեալ դիւաններուն մէջ, այսքան դիւանադպրաց հարկ չէ մնար և քանի մը դիւանադպիր կը բաւէին մեզ. թող վարչութիւնը բերէ իւր պիւտձէն և ցուցնենք թէ ի՞նչ զեղծումներ կան անոր մէջ:

Ազգային ժողովոյ ներքին ծախուց խնդիրը կուզենք որ ուղղուի. այն աստիճան նախատուած ենք որ տեսէք՝ վարչութիւն չկայ հոս: Ես կը փափաքիմ որ ըսածներս ստոյգ չեղնեն և հարկադրուիմ՝ զանոնք յետս կոչելու. բայց եթէ ստոյգ են՝ բնաւ ետ չեմ առնուր:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Նախ՝ Պէշիրեան էֆէնտիի առաջարկութեան թուղթը՝ որոյ համար պահ մը յառաջ խօսք անցաւ թէ նախաձեռնութեան դիւանէն ետ եկած է Ռուսիոյն էֆէնտիի մահուան պատճառաւ, նորէն նոյն դիւանին դարձնելու համար սապէս գրեցի:

« Կը խնդրեմ յանուն Ազգային ժողովոյ՝ որ դիւանի երկու պատուական անդամք շնորհ ընեն քննել սոյն խնդիրը « և տեղեկագիր բերել ժողովին »:

Երկրորդ՝ գալով մեր Ատենադպիր էֆէնտիի խօսածներուն, կը յայտնեմ թէ այն խօսքերը պարզապէս տեղեկութիւններ էին, զոր ինքն իր կողմէն ժողովիս հաղորդեց՝ առանց զոք թշնամանելու նըպատակ ունենալու անշուշտ:

Ի վերջոյ կազաչեմ որ վերջ տրուի այս միջադէպին և խնդրոյն գործնական մասին միայն կարծիք յայտնուի. ես չէի սպասեր որ խօսքերը մինչև անձնականութեանց դաշելու չափ յառաջ երթան և մինչև իսկ վարչութեան դէմ այս աստիճան վիրաւորիչ ակնարկութիւնք տեղի ունենան. արդէն դժուարութեամբ կըրցինք Օգոսէն էֆէնտիի խօսքն ըստ մասնեայ ետ առնել տալ. այժմ դուք ալ, Փափագեան էֆէնտի, նոր դժուարութիւն մի՛ յարուցանէք:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ.** — (Ընդհանուր) նախ՝ Ատենադպիր էֆէնտին թող ես առնու այն նախատինքը՝ զոր ըրաւ մեզի. միթէ Վարչութիւնն իրեն համար ըրած տպագրական ծախքերն իւր քսակէն կը վճարէ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — (Շորանկէլ) Զ՛վայլեր որ Վարչութեան դէմ այսպիսի ծանր խօսքեր ընէք՝ մինչ նա բացակայ կը գտնուի. պէտք է անոր ներկայութեան խօսիլ վեհանձնարար և ոչ կրիւք. եթէ այսպիսի խօսքեր շարունակէք՝ պիտի բտխալէք զիս ատենանք գոցել:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Ատենադպիր էֆէնտին ըսաւ թէ այս նստէն ըսկըսեալ ուրիշ կերպով պիտի տպուին ատենագրութիւններն. ստո՞յգ է այս:

**ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.** — Արդէն Տնտես. խորհրդին և մեր դիւանին մէջ այսպիսի խորհուրդ մը կար, չորս հինգ ամիս յաւաջ, և ես պայմանագրութեան մէջ մէկ երկու սրբագրութիւն ընելով յանուն դիւանին հաւանութիւն տուի, բայց կախ մնացած էր. հիմա ըստ որում Ատենադպիր էֆէնտին կըսէ թէ ներկայ նրստէն սկսեալ պիտի գործադրուի, ըսել է թէ որչափ առած լինցած է Վարչութեան մէջ:

**ԱՏԵՆԱՂՊԻՐ ԷՖ.** — Խնդրեմ, փափագեան էֆէնտին, ինծի համար ըսիք թէ ժողովոյս նախատինք ըրաւ, ո՞րն է նախատական խօսքս՝ բացատրեցէք. ևս

ոչ միայն ժողովոյս նախատինք ուղղելու նպատակաւ խօսք մը չուղղեցի, այլ նաև իմ խօսքերէս այդպիսի հետեւութիւն չը կրնար ելնել. չեմ գիտեր թէ Փափագեան էֆէնտին ո՞ւրից կը հանձն այդ հետեւութիւնը:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ.** — Դուք մեզի կըսէք որ ատենագրութեանց գիները չվճարելու համար ատենագրութիւնք ժամանակին չեն հասնիր. ևս ալ կըսեմ որ Վարչութեան ըրած աւերորդ ու անտեղի ծախքերն են պատճառ ատենագրութեանց տպարանէն ուչ ելնելուն: Այս խօսքս արձանագրեցէք:

**ԱՏԵՆԱՂՊԻՐ ԷՖ.** — Ես ըսել ուզեցի թէ երեսօխաններէն անոնք որ ատենագրութեան համար պարտք ունին, պէտք է վճարեն, որպէս զի ժողովին տպագրական ծախքերը հակակշռուին գէթ մասամբ:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ.** — Ոչ. ըսիք թէ աւելի բողոքողներն անոնք են, որ իրենց պարտքը չեն հատուցաներ:

Ատենապետ փաջան տեսնելով որ երեսօխանը հետզհետէ մեկնելով խիստ սակաւաթիւ մնացին, և ներկային մէջ յուզմունք տիրելով, կանոնադրութեան նախագիծն անգամ անկարելի կըլլայ, ատենանք փակեց ժամը ցին:

ԱՏԵՆԱՂՊԻՐ Գ. Յ. ՄԵԼԻԻՔ      ԱՏԵՆԱՊԵՏ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

**ՈՒՂԵՐԶԻ ԵՒ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆՔ**  
Ընթերցեալք յաւուր այցելութեան Մեծ-Եպարքոս Միտհատ փաջայի 'ի Պատարարարան Հայոց՝ յիններորդում աւուրամսեանն յունվարի 1877:

**Ուղերձ Միտհատ Սիմեոն Պէրէ:**

Հայոց ազգին երեսօխանական ժողովոյ անդամները Ձեր Բարձրութեան ներկայանալու շնորհին արժանացած ըլլալուն համար ինքզինքնին երջանիկ կը համարին: Ի վաղուց անտի մեր ազգին կայսերական կառավարութեան շնորհիւ վայելած ինամքն ու արածութիւնքը՝ Ձեր Բարձրութեան օրով տեղի ունեցած օգտակար և գեղեցիկ գործոց վրայ բարդելով, այս մասին ունեցած շնորհակալութիւնն ըստ արժանւոյն յայտնելու անկարող կը գտնուինք, ուստի կը բարեմաղթեմք միայն՝ որ բարձրեալն Աստուած երկար կեանս պարգևեցէ մեր Վեհափառ և բարեխնամ կայսեր:

**Արեւիշուքի Մեծ-Եպարքոս Միտհատ Պէրէ:**

Օսմանեան կայսրութեան հպատակ զանազան ազգաց պատմական կեանքը քննելու ատեննիս, կը տեսնեմք որ Հայոց ազգին առ Օսմանեան պետութիւնն ունեցած հպատակութիւնն ու սերտ կապակցութիւնը մասնաւորութիւն մ'է, նոյն ազգին ինքնայօժար փափաքանօք Օսմանեան դրօշակին ներքե հաւաքուիլ ուզելէն յառաջ եկած: Անցեալ դարերուն մէջ Հայք իրենց միութեան կապը և քաղաքական դիրքը խզուելուն պատճառաւ աշխարհի զանազան և հեռաւոր տեղերը ցըրուելով, այն ինչ ազգութիւննին ջնջուելու մերձեցած էր, Յովակիմ վարդապետին շնորհիւ Օսմանեան պետութեան հոգանւոյն տակ ապաստանեցան, և ահա նոյն ժամանակէն 'ի վեր՝ որ չորս հարիւր այսրան տարի կընէ, Հայք իրենց կրօնքն ու ազգութիւնը պահպանելով՝ կատարեալ

անդորրութեամբ ու հանգստութեամբ ապրեցան, և փորձով ու արդեամբ 'ցոյց տուին այն բարեհամբոյր կենցաղակցութեան ոգին, որ քաղաքակրթութեան և մարդավարութեան վսեմ յատկութիւններէն մէկն է, և զերջին դարուս մէջ այսուամբ բարոյականութեամբ և արհեստիք իրենց ազգային բարքն ու սովորութիւնները չքեղազարդելու մասին ջանադիր գտնուեցան: Այսպէս Հայոց ազգը թէ՛ ազգային և թէ՛ մարդկային յատկութիւնները ճանչցած և սոյն յատկութեանց կարեւորութիւնն զգացած ըլլալով, մեր Վեհափառ կայսեր առհասարակ իւր բոլոր հպատակաց համար շնորհած Սահմանագրութեան համեմատ Օսմանեան պետութիւնը կազմող բնական տարերաց մէջ կը գտնուի, և իւր ընդհանուր հայրենակցաց հետ ընդգրկած Օսմանեան դրօշակին յարգն ու պատիւը պաշտպանելու գործն իւր ազգային և քաղաքական բոլոր իրաւունքներուն պիտի նախադասէ, և ես իմ հայրենակցացս հետ հաւատով եմ որ Հայոց ազգն այս մասին ամեն սըլխատութիւն նուիրելէ ետ չպիտի մնայ:

**Արեւիշուքի Մեծ-Եպարքոս Պէրէ:**

Տէ՛ր իմ, մեր պարտաւորութիւնն է շարունակ աղօթող լինիլ առ Աստուած. սակայն այս պահուս իմ բարեմաղթութիւններս զխաւորապէս երկու կէտի յատկացուցած եմ. նախ՝ կը բարեմաղթեմ որ բարձրեալն Աստուած Օսմանեան պետութիւնը չըջապատող ներկայ հոգերը բոլորովին ջնջելու և փարատելու շնորհ ընէ. և երկրորդ՝ ընդհանուր Օսմանեան հպատակաց այսօրուան օրս ունեցած եղբայրական յարաբերութիւնը յարատւ շարունակել տալու շնորհ ընէ:

Տէ՛ր իմ, դուք՝ որ մեր հպատակասէլ Վեհափառ կայսեր փոխանորդութեան բարձր պաշտօնն ամենայն արժանաւորութեամբ վարող, և քաղաքակրթութեան ու երկրին շինութեան յառաջացման մասին Նորին Վեհափառութեան ունեցած

բարենպաստակ դիտաւորութեանց ՚ի փառս Օսմանեան երկրին գործադրութեանը համար քան զամենքը գերազանցող Մեծ-Եպարքոսն էք, և Օգոստոսափառ կայսեր մեծ հոգին ու գեղեցիկ սիրտն անձնաւորած էք բարոյապէս, այսօր ՚ի Պատրիարքարանս մեր այցելութեան զիջանելու շնորհ ընելով՝ զամենինս ալ անպատում բերկրութեամբ լիացուցիք և մեր վշտաց մեծապէս մխիթարութիւն պարգևեցիք: Ուստի ՚ի դիմաց աշխարհիս չորս կողմը բնակող միլիոնաւոր Հայոց շնորհակալութիւն կը յայնեմ:

Ձեր բարձր այցելութիւնը մեծ շնորհ մ'է մեզ, այնպիսի շնորհ մը՝ որուն Պատրիարքարանին զիւանին մէջ ոսկի տասելով իսկ արձանագրուիլը բաւական չէ:

Մեք՝ Օսմանեան հպատաներս հինգ հարիւր տարուան հօր մը զաւակներն ենք. եթէ երբէք եղբարց մէջ մինչև ցարդ անհամաձայնութիւնք տեղի ունեցան, մեք մեր հօր՝ այն է Վեհափառ կայսեր և Օսմանեան դահուն պարտապատշաճ յարգանաց և հաւատարմութեան մասին սակասաւոր չգտնուեցանք. սաի ամենայն պարծանօք կը յայտարարեմք. Օսմանեան պետութիւնը մեզնէ աւելի հաւատարիմ հպատակ չունի. Հայոց ազգին հաւատարմութիւնը չէ թէ արտաքին ցոյց մ'է, այլ ճշմարիտ և սրտագին: Օսմանեան մեծ ազգն ՚ի բնէ ասիական ըլլալուն, մեր իրաւունքն է ըսել թէ անոր ամենէն զըրացի եղբայրը Հայոց ազգն է: Մեք կարող կ'զգատք ինքզինքնինս ծառայել այն ձեռնարկութեանց, որ Ձեր Բարձրութեան շնորհիւ ՚ի լոյս եկին:

Ձեր այս այցելութիւնը՝ մինչև ցարդ իրարմէ հեռի պտըտող մէկ հայրենեաց եղբայրները յօգիւ սիրոյ պիտի միացնէ. հետեապէս սորա շարունակութեանը փափաքանօք՝ միասիրտ և միաբերան կը բարեմաղթեմք առ Բարձրեալն Աստուած, գոչելով. « Կեցցէ՛ Օգոստոսափառ կայսրն մեր Սուլթան Ապտիւլ Համիտ երկրորդ. Կեցցէ՛ Նորին հազուագիւտ Եպարքոսն Միտհաթ փաշա: »

Ուղեր) Ե-----Ֆեռ Տէգրաւ Էֆէնդիէ .

Կայսերական հրամանաւ հաստատեալ Ազգ. Սահմանադրութեան համաձայն ընտրուած ազգային ժողովոյ անդամք, որ Օսմանեան հոգին մէջ բնակող ընդհանուր Հայոց երեսփոխաններն են, երջանիկ կը համարին ինքզինքնին՝ Ձեր Բարձրութեան ՚ի Պատրիարքարանս մեր ըրած այցելութեան մասին Հայոց ազգին զգացած շնորհակալութեան և բերկրանաց թարգմանը հանդիսացած ըլլալուն համար:

Հայոց ազգը 500 տարուան անձնուէր հաւատարմութեամբն Օսմանեան զահն ընդգրկած, սրտանց սիրած է զայն աչքին լուսոյն պէս, և իւր կրօնական ազատութեան հետ պահպանած է նաև իւր կրօնական և քաղաքական գործոց վարչութիւնն՝ որ ՚ի վաղուց անտի Օսմանեան պետութեան կողմէ շնորհուած հաստատուն արտօնութեամբք ապահովեալ է:

Թանգիմաթի հաստատութենէն ետև Ձեր Բարձրութեան Մեծ—Եպարքոսութեան միջոցին հրատարակուած Օսմանեան Սահմանադրութիւնն՝ անտարակոյս ընդհանուր վարչութեան գործադրութիւնը զօրացնելով, Օսմանեան պետութեան ոյժն ու փառքը պիտի նորոգէ և ըստւարացնէ, հետեապէս երկիրն ու հայրենիքը այս բարձր շնորհիս համար Օգոստոսափառ Սուլթան Համիտ խան կայսեր և նորա Մեծ—Եպարքոսն ու Օսմանեան երկրին առաջին հայրենասէրն եղող Միտհաթ փաշային երախտապարտ պիտի մընան:

Կեցցէ՛ մեր Վեհափառ կայսրն. կեցցէ՛ Բարձր Միտհաթ փաշան. կեցցէ՛ ազգըն Օսմանեան:

Ուղեր) Փ-----Գեղ Գեղեք Էֆէնդիէ .

Օսմանեան տէրութեան հովանաւորութեան ներքև գտնուող սոյն Պատրիարքարանն՝ որ մինչև ցարդ այսպիսի շնորհի մը արժանացած չէր, այսօր պսակուեցաւ փառօք այցելութեան այն Բարձր:

Մեծ Եպարքոսին՝ որոյ նուաստ ծառայն եմ ընդհանուր Հայոց ազգը հրճուեցաւ և իւր շնորհակալութիւնը կարող չէ յայտնել: Բարձրեալն Աստուած հաճեցի երկար կեանք պարգևել մեր Օգոստոսափառ Սուլթան Ապտիւլ Համիտ կայսեր, և ներկայ խնդրոց առթիւ Ղազի տիտղոսը շնորհել

Նորին Վեհափառութեան: Յետ այսորիկ լրագիրք և պատմութիւնք Ձեր Բարձրութեան գովեստներով թող զարդարեն իրենց էջերք: Ձեր բարձր պաշտօնին մէջ ամենայն յաջողութեամբ շատ ապրիք՝ Միտհաթ փաշա:

Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Սոյն ատենադրութեան տպուած ժամանակ՝ նախորդ ատենադրութիւնը (որ ուրիշ տպարանի մէջ կը տպուէր) դեռ տպեալ չըլլալուն, թերթահամարները ծանօթ չէին: Բայց այժմ տպեալ ըլլալով, թերթահամարին շարունակութիւնը կըրցաւ ճշգուիլ, որ պիտի ըլլայ 551 էն 558:

Գրքի վերջում կանգնած է ինքնապատկերը... Գրքի վերջում կանգնած է ինքնապատկերը...

Գրքի վերջում կանգնած է ինքնապատկերը... Գրքի վերջում կանգնած է ինքնապատկերը...

Տ Ի Կ Գ Բ Գ Բ Գ Բ Գ Բ Գ

### ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

#### ԿՐԾՆՈՒՄՆ ԺՈՂՈՎ

1	Խորեն եպիսկոպոս	Մխիթարեան	Ա. Ատենապետ
2	Յակոբ վարդապետ	Փափազեան	Ա. Ատենադպիր
3	Վլորդ Աւագ Ք.	Արծրունի	Բ. Ատենապետ
4	Գարրիէլ	Չիչեքճեան	
5	Յովհաննէս	Մկրեան	
6	Իշնատիոս	Մանազեան	
7	Գրիգոր	Աէթեան	
8	Խաչատուր քհնյ	Տ. Գարրիէլեան	Բ. Ատենադպիր
9	Արիստակէս	Քարակէօմրիւկի	
10	Պետրոս	Փափազեան	
11	Աթանաս	Ս. Խաչ յիւսիսեւոս	
12	Մեսրոպ	Երէցեան	
13	Միքայէլ	Պալատու	
14	Զաքարիա	Բերայի	

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Ապրօ	Սահակ	էֆէնտի	Ա. Ատենապետ
2	Շահապ	Կարապետ	"	Բ. "
3	Նուրեան	Յովհաննէս	"	Ա. Ատենադպիր
4	Պոյաճեան	Յովհաննէս	"	Բ. "
5	Նորատունկեան	Յակոբ	"	
6	Կիւլպէնկեան	Սերոբէ	"	
7	Էսայեան	Յովհաննէս	"	
8	Ազնաւորեան	Յովհաննէս	"	
9	Սաքայեան	Ալիքսան	"	
10	Մագսուտեան	Սեպուհ	"	
11	Կրճիկեան	Անդրանիկ պէյ		
12	Մարկոսեան	Գրիգոր	էֆէնտի	
13	Քաղազեան	Յակոբ	"	
14	Յրէնկեան	Յակոբ	"	



ԳԻՆ ԵՐԿՈՒ ԴՐՈՒՆԾ ՊՂԻՆԶ



Կը ծախուէ Ղալաթիա Մասիս լրագրոյ գրասենեակը,  
Ղալաթիոյ եկեղեցւոյն բանկայր, Դարագեղի կամուրջին  
գլուխն Երկանեան Ղուկաս աղային Պարաքան, և Կ. Պոլ-  
սոյ կողմն ալ ջրալաճառ Պօղոս աղային խանութը: